«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2015

ՆԱԽԱԲԱՆ

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ՎՊՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ի «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագիտական խմբի առջև դրված էր երկու խնդիր՝

1) հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ՎՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննության արդյունքներն՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների, և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումներն՝ ըստ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 16

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 16

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 20

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 21

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 24

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 28

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 33

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 38

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 42

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 46

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 50

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 53

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 56

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 60

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 64

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 69

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ՎՊՀ-ն, համաձայն իր տեսլականի, ձգտում է «բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով կոմպետենտ մասնագետներ և դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացում ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն»:

ՎՊՀ-ի առաքելությունն է.

1) ապահովել կայուն զարգացում և ինտեգրվել եվրոպական միասնական կրթական տարածք, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնել *շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությունը:*

2) պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, *ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր:*

3) ընդունելով *հասարակության առջև իր պատասխանատվությունը,* նպաստել անհատի շարունակական զարգացմանը, ստեղծել նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար:

Ուսումնական հաստատությունը ՀՀ կառավարության որոշման համաձայն 2014թ. ապրիլին վերանվանվել է «Վանաձորի պետական համալսարան» և հանդիսանում է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի իրավահաջորդը:

ՎՊՀ-ն տարածաշրջանի առաջին կրթական համալիրն է, որն իրականացնում է քառաստիճան ուսուցում՝ միջին մասնագիտական (2010թ-ից), բակալավրիատ, մագիստրատուրա (2008 թ-ից) և ասպիրանտուրա (2006 թ-ից):

ՎՊՀ-ն արտոնված է բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում իրականացնել 28 բակալավրական և 13 մագիստրոսական կրթական ծրագրեր, 2015 թ. ընդունելություն է կատարվելու ևս 3 նոր մասնագիտությունների գծով:

Բուհի կառավարման համակարգում կան որոշ թերություններ, որոնք խոչընդոտում են գործունեության արդյունավետությանը: Բուհում մեծ աշխատանք է տարվում ներքին շահակիցների կարիքների վերհանման ուղղությամբ, սակայն նկատվում է ակնհայտ դանդաղկոտություն բացահայտված կարիքների բավարարման հարցում: Պլանավորման,

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

իրականացման, ստուգման և բարելավման մեխանիզմները կառավարման համակարգում առայժմ լիարժեք ներդրված չեն: Կոլեգիալ կառավարումը դեռևս զիջում է միանձնյա որոշումների կայացմանը:

ՎՊՀ-ում թյունինգ մետոդաբանությամբ մշակվել են ՄԿԾ-ների մասնագրեր հստակ ձևակերպված վերջնարդյունքներով (գիտելիք, հմտություն, կարողություն) և առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ, որոնցում մանրամասն նկարագրված են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները: ՄԿԾ-ները համադրվել են այլ բուհերի /Հայաստանի և արտասահմանի/ նմանատիպ ծրագրերի հետ: ՄԿԾ-ներում ներկայացված է նախօրաք արված աշխատաշուկայի վերլուծությունը: Համալսարանի նյութատեխնիկական բազան և շենքային պայմանները միշտ չէ, որ համապատասխանում եմ ՄԿԾ-ներում ամրագրված բազմազան դասավանդման և ուսումնառության մեթոդներին:

ՎՊՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ, սակայն դրանց արդյունավետության գնահատում բուհը չի արել: Վերջին տարիներին ուսանողների թիվը նվազման միտում ունի: Նկատվում է առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման համակարգ ուսանողների ներհոսք:

Բուհը հաջողությամբ ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր: Մշակված բազմաթիվ մեխանիզմները նպաստում են ուսանողների կարիքների վերհանմանը: Ուսանողներին օժանդակելու համար ստեղծվել է ակադեմիական խորհրդատուների ինստիտուտը:

Բուհն ապահովված է որակյալ պրոֆեսորադասախոսական /ՊԴ/ կազմով, սակայն որոշ մասնագիտությունների գծով սերնդափոխության ապահովման վտանգ կա: ՎՊՀ-ում պարբերաբար անցկացվում են դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման միջոցառումներ: Բուհը խրախուսում է դասախոսների մասնագիտական աճը և վերջին տարիներին բավական աճել է գիտական կոչում և աստիճան ունեցող դասախոսների թիվը, սակայն հետազոտության միջազգայնացման համար դեռ բուհը չունի բավական ներուժ:

Հետազոտության ոլորտում ՎՊՀ-ի սահմանած նպատակների մեծ մասն առկա ռեսուրսային բազայի ու հատկացվող ֆինանսական միջոցների հետ համեմատությամբ խիստ հավակնոտ է, ունեն լայն ուղղվածություն և զարգացման հայեցակարգով նախատեսված ժամկետում՝ անիրականանալի: Հստակեցված չեն բուհի գերակայությունները: Հետազոտական բաղադրիչն արտահայտված է մագիստրատուրայի կրթական ծրագրերում: Բուհի գերակա ուղղություններից է եղել հայագիտությունը, որտեղ բուհն ունի մեծ քանակությամբ հետազոտություններ: Համալսարանը որոշակի դեր ունի նաև մանկավարժական գիտության բնագավառում: Այլ ոլորտներում դասախոսական կազմը, անհրաժեշտ պայմանների ստեղծման և ֆինանսավորման արդյունքում, կարող է համապատասխանել բուհի կողմից ներկայացված նշանաձողին: Այդ նպատակներին հասնելու համար բուհը պետք է որոշակի ֆինանսական ներդրումներ անի, մինչդեռ հենց բուհի ինքնավերլուծությունից երևում է, որ դրանք խիստ անբավարար են, իսկ հետազոտությունները չեն ապահովում որևէ տեսակի ֆինանսական հոսքեր:

Համալսարանը չունի ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման քաղաքականություն, ինչը խոչնդոտում է ուսումնական միջավայրի ստեղծմանը և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացմանը:

Բուհը գիտակցում է իր պատասխանատվությունը Լոռու մարզի հասարակության առջև և փորձում է բավարարել մարզի կարիքները:

ՎՊՀ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկում արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ: Միջազգային կապերի շնորհիվ ձեռքբերված փորձը նպաստում է բուհի զարգացմանը՝ թյունինգ մեթոդաբանությամբ ՄԿԾ-ների մշակմանը, որակի ապահովման ցանցային մոդելի ներդրմանը, ուսանողների և դասախոսների շարժունության ծրագրերում ընդգրկմանը: Բուհի միջազգայնացմանը խոչընդոտում է օտար լեզուների չիմացությունը: Բուհը կազմակերպում է վերապատրաստումներ, հիմնել է Լեզուների կենտրոն, սակայն դեռ մեծ հաջողությունների այս ուղղությամբ չի հասել:

ՎՊՀ-ում աշխատանքներ են տարվում որակի ապահովման ցանցային համակարգի ձևավորման ուղղությամբ: Որակի ապահովման կառույցի արդյունավետ գործունեության շնորհիվ բուհում կազմակերպվում են իրազեկության բարձրացման սեմինարներ, վերապատրաստումներ, կարիքների վերհանման հարցումներ, շահակիցների հետ քննարկումներ: Այդ ամենօրյա աշխատանքի շնորհիվ է, որ աստիճանաբար փոխվում է որակի ապահովման գործընթացների և ՈԱԿ-ի նկատմամբ վերաբերմունքը բուհի ներսում: Որակի ապահովման կառույցի ծավալած գործունեությունը նպաստում է բուհում բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը, շահակիցների կարիքների ժամանակին վերհանմանը, խնդիրների լուծմանը: Սակայն կառավարման մարմիններ – ՈԱ Կենտրոն հարաբերությունները հստակեցնելու, կապերն ամրապնդելու կարիք ունեն: Որակի ապահովման սկզբունքներով աշխատառճը դեռևս որդեգրված չէ բուհի բոլոր ստորաբաժանումների կողմից:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Լոռու մարզի աշխատաշուկայի պահանջներին համահունչ հաստատության առաքելություն և մասնագիտությունների կրրթական ծրագրերի ընտրությունը:
2. Բարեփոխումներին միտված աշխատակազմի առկայությունը:
3. Ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը նպաստող մշակված ՄԿԾ-ների առկայությունը, որոնց մի մասը ներդրված է, մյուսը՝ ներդրման փուլում է:
4. ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների բազմազանությունը:
5. Ուսնողներին ակադեմիական օժանդակության և ուղղորդման համար Ակադեմիական խորհրդատուների ինստիտուտի առկայությունը:
6. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար բարոյահոգեբանակիան առողջ մթնոլորտի ապահովումը:
7. Բուհի բարեփոխման գործընթացներում արտաքին դրամաշնորհների շրջանակում ձեռքբերված փորձի կիրառումը /ՄԿԾ-ների մշակում, դասախոսների վերապատրաստում, որակի ապահովման մոդելի ներդրում/:
8. Բուհի արտաքին կապերի անընդհատ զարգացումը:
9. Որակի ապահովման ստորաբաժանման պրոակտիվ աշխատանքը:
10. Բուհի կողմից սեփական թույլ կողմերի քաջ գիտակցում:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Առաքելության, նպատակների և դրանց իրականացման համար առկա ռեսուրսերի միջև անհամապատասխանությունը:

2. Կառավարման համակարգում որակի ապահովման սկզբունքի՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում, ոչ լիարժեք կիրառումը:
3. Կառավարման համակարգում հաճախ անհարկի ուղղահայաց կառավարման մեթոդների առկայությունը:
4. Թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների գիտահետազոտական աշխատանքը խրախուսելու միջոցների սակավությունը:
5. Բուհի ռեսուրսների պակասը /ճաշարանի, սպորտ դահլիճների, ուսանողական հանրակացարանի և հյուրերի տան, էլեկտրոնային գրադարանի, հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը և այլն/:
6. Ֆինանսական աուդիտի բացակայությունը:
7. Գիտության զարգացման համար թույլ ռեսուրսային բազան:
8. Բուհի գիտական հետազոտությունները չունեն միջազգային ճանաչում:
9. Դեռևս չի ձևավորվել հետազոտահեն կրթությունը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքելություն և նպատակներ

1. Բուհի առաքելությունն առավել չափելի և հստակ դարձնելու համար անհրաժեշտ է հստակ արտահայտել, որ բուհն իր առաքելությունն է համարում Հայաստանի հյուսիսային շրջանների շուկայի պահանջներին համահունչ մասնագիտական կադրեր պատրաստելը, տարածաշրջանի կայուն զարգացման ապահովման համար հասարակությանը գիտակրթական և մշակութային ծառայություններ մատուցելը:
2. Առաքելության իրականացումը վերահսկելու համար անհրաժեշտ է բուհի հայեցակարգում նշված ռազմավարական ուղղությունների հիման վրա կազմել ռազմավարական ծրագիր իր հստակ ժամանակացույցով և պատասխանատուներով:
3. Ռազմավարական ծրագրի, միջնաժամկետ և տարեկան պլանների իրականացման արդյունքների գնահատման համար անհրաժեշտ է մշակել քանակական և որակական չափելի և հասանելի ցուցիչներ:
4. Անհրաժեշտ է բարելավել արտաքին շահակիցների հետ կապի մեխանիզմները: Հաշվի առնելով առաքելության փոփոխության արդյունքում գործատուների կազմի ընդլայնումը, անհրաժեշտ է պարբերաբար թարմացնել աշխատաշուկայի հետազոտությունները, վեր հանել խնդիրները և ուսանողներին տալ այնպիսի գիտելիք և հմտություն, որոնք կհամապատասխանեն աշխատաշուկայի պահանջներին:
5. Միջոցներ գտնել ներքին և արտաքին շահակիցների մոտիվացիան բարեփոխումների նկատմամբ բարձրացնելու համար:

Կառավարում և վարչարարություն

6. Որոնել ճանապարհներ լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ ապահովելու համար: Անհրաժեշտ է կատարելագործել ֆինանսական մուտքերի և ֆինանսական ռեսուրսների ձևավորման և կառավարման արդյունավետ մեխանիզմները, ներդնել ֆինանսական աուդիտի համակարգ:
7. Բարեփոխել կառավարման համակարգը, որոշումների կայացմանն իրապես ներգրավելով շահակիցներին, բարելավել հետադարձ կապի մեխանիզմները:

8. Անհրաժեշտ է հաշվի առնել առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների կարիքները:
9. Համակարգել բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը, ստեղծել հավաքագրված տվյալների հավաստիությունը ստուգող հստակ մեխանիզմներ:
10. Անհրաժեշտ է հավաքագրված տվյալներն ավելի արդյունավետ օգտագործել զարգացման միտումները բացահայտելու և նոր թիրախներ սահմանելու համար: Պլանավորում կատարելիս և որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է հիմնվել վերհանված տվյալների վերլուծության վրա:

Մասնագիտության կրթական ծրագրեր

11. Անհրաժեշտ է, ՄԿԾ-ների վերջնարդյունքներն ապահովելու համար ստեղծել համապատասխան ռեսուրսային բազա /մասնավորապես, ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի ռեսուրսները նորացման կարիք ունեն/:
12. Գնահատման քաղաքականության բարելավման ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել ակադեմիական ազնվությանը: Համալսարանը պետք է մշակի գնահատման հստակ ուղեցույցներ ակադեմիական ազնվության ապահովման համար: Անհրաժեշտ է ոչ միայն պատժիչ և վերահսկողական գործողություններ կիրառել, այլև մեծ աշխատանք տանել իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ, բացատրել թե գրագողությունը ինչ վտանգներ է իր մեջ պարունակում:
13. Ներդնել շրջանավարտների հետ հետադարձ կապի հուսալի մեխանիմներ: Իրականացնել ըստ ՄԿԾ-ների շրջանավարտների զբաղվածության հետ կապված ռիսկերի գնահատում և ՄԿԾ-ները բարելավել այդ ռիսկերի հաշվառմամբ:

ՈՒսանողներ

14. Անհրաժեշտ է գնահատել ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը:
15. Կապեր հաստատել տարբեր արտաքին շահակիցների հետ՝ գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավելու նպատակով:
16. Պարբերաբար հանդիպումներ, սեմինար-քննարկումներ կազմակերպել գործատուների հետ՝ ներգրավելով ինչպես առկա, այնպես էլ հեռակա սովորողներին:
17. Մշակել շրջանավարտների հետ կապի պահպանման առավել արդյունավետ մեխանիզմներ:
18. Համալսարանը՝ հեռակա և առկա համակարգերում սովորող ուսանողների համար պետք է ապահովի հավասար հնարավորություններ:
19. Ուսանողական խորհրդի աշխատանքներին թեկուզ առցանց ձևաչափով մասնակից դարձնել հեռակա ուսուցման ուսանողներին: Նույն մեթոդը կարելի է օգտագործել հեռակա ուսուցմամբ ուսանողների կարիքների վերհանման համար:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

20. Մշակել մեխանիզմներ՝ դասախոսների շարժունությունն ապահովելու համար:
21. Խրախուսել դրամաշնորհային անհատական ծրագրերում դասախոսների ընդգրկումը և ստեղծել նրանց դրական փորձի տարածման մեխանիզմներ /մենթորություն/:
22. Կադրերի որակի բարձրացմանը կարող է նպաստել վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական կազմերի մրցույթով աշխատանքի ընդունման կարգի մշակումն ու կիրառումը:
23. Անհրաժեշտ է անձնակազմի հետագա զարգացման նպատակով կազմակերպել ՊԴ կազմի նպատակային վերապատրաստումներ ըստ վերհանված կարիքների:

Հետազոտություն և զարգացում

24. Անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել հետազոտությունների գերակա ուղղությունները:
25. Գիտության զարգացման ոլորտի բարեփոխումների հայեցակարգի և բուհի գիտության ոլորտում հաստատված գերակայությունների հիման վրա կազմել երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, հստակ ժամանակացույցերով:
26. Լրամշակել հետազոտական աշխատանքի համար նախատեսվող խրախուսման միջոցները:
27. Ստեղծել ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքների որակը գնահատող մեխանիզմներ:
28. Մշակել և ներդնել միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգեր,
29. Մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեն հետազոտությունների միջազգայնացմանը (օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացում, թարգմանչական բաժնի շրջանավարտներին հետազոտությունների և գիտական հոդվածների թարգմանության լուրջ և ծանր աշխատանքներում ներգրավում):

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

30. Կատարել արտաքին ֆինանսական աուդիտ:
31. Բուհը պետք է փորձի գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ, քանի որ արդեն իսկ առկա աղբյուրներից ստացված եկամուտները կրճատման միտում ունեն:
32. Անհրաժեշտ է հետազոտել ըստ ՄԿԾ-ների կարիքների բյուջեի բաշխման արդյունավետությունը և բարելավումը կատարել ստացված տվյալների հիման վրա:
33. Ընդլայնել մատուցվող ծառայությունների և իրականացվող ծրագրերի ցանկը, վճարովի ծառայությունների տեսականին, մեծացնել դրանց ծավալները, եկամտաբերությունը:
34. Միջոցներ ձեռնարկել՝ ուսանողներին հանրակացարանով ապահովելու համար, համալսարանի տարածքում սնվելու հնարավորություն ստեղծել:

Հասարակական պատասխանատվություն

35. Ապահովել հաշվետվողականություն բուհի ռազմավարության և տարեկան պլանների հիման վրա: Այդ դեպքում ավելի հեշտ կլինի գնահատել գործունեության արդյունքները:
36. Համալսարանի կայքէջի գործունեության մշակվող կարգում, նախատեսել կայուն մեխանիզմ կայքէջն օտարալեզու նյութերով համալրելու ուղղությամբ, ինչը նպաստավոր քայլ կլինի միջազգայնացման ուղղությամբ:
37. Կարելի է Լրագրության ֆակուլտետի դասախոսներից մեկին և միքանի ուսանողների վերապատրաստել PR-ի ապահովման ուղղությամբ:
38. Իրավաբանական կենտրոնի հիման վրա դիտարկել իրավաբանական կլինիկայի ստեղծման հարցը, որն անվճար ծառայություններ կմատուցի հասարակությանը: Կլինիկան մեծապես կնպաստի իրաբավան ուսանողների պրակտիկային և լրացուցիչ կապեր կստեղծի հասարակության հետ:

Արտաքին կապեր և միջազգայնացում

39. Մշակել հստակ մեխանիզմներ օտար լեզվի դասընթացների որակը մշտապես ստուգելու համար:
40. Իրականացնել համատեղ հետազոտական ծրագրեր և ձևավորել միջազգային համագործակցության արդյունավետության ցուցիչներ:
41. Ցանկալի է միջազգայնացումը ներառել նաև ամբիոնների աշխատանքային պլաններում:

Որակի ներքին ապահովման համակարգ

42. Անհրաժեշտ է հստակեցնել և ամրապնդել կապը կառավարման և որակի ապահովման մարմինների միջև:
43. Որակի ապահովման գործիքակազմը պետք է մշակվի բուհի ռազմավարական առաջնահերթություններին համապատասխան
44. Նպատակահարմար է, որ Որակի ապահովման կենտրոնը Անհրաժեշտ է, որ որակի ապահովման շրջափուլը `ՊԻԳԲ, կիրառվի բուհի բոլոր ստորաբաժանումների աշխատանքում և տարածվի բոլոր գործընթացների վրա:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Որպես քննադատ-բարեկամներ՝ փորձագիտական խումբը կատարել է գործընկերային գնահատում, որի արդյունքում ներկայացվում են մի շարք խորհրդատվություններ՝ համալսարանի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու հավակնության վերաբերյալ: Խումբը գովելի է համարում համալսարանի առաջընթացն այս առումով և ցանկանում է ներկայացնել մի շարք խորհրդատվություններ, որոնք կօգնեն համալսարանին ինտեգրվել ԵԲԿՏ: Այս խորհրդատվությունների նպատակն է խրախուսել համալսարանի՝արդեն իսկ սկսած աշխատանքը շարունակական դարձնելու միտումը:

<u>Դիտարկումներ և վկայություններ</u>

Պետք է խոստովանել, որ համալսարանի անձնակազմը ջանք չի խնայում համալսարանի առաքելությանը հասնելու համար, և պարզորոշ է, որ համալսարանը գտնվում է շարունակական զարգացման փուլում: Ակնհայտ է, որ համալսարանը շեշտը դրել է իր շրջանավարտների աշխատունակության վրա, և խումբը տեսավ մի քանի խրախուսական նախաձեռնություններ և ծրագրեր, թեև դրանց քանակական արդյունքերը դեռևս հայտնի չեն: Առաքելության մեջ երկրորդ կարևոր կետը «ուսանողակենտրոն» միջավայրի ստեղծումն է: Անձնակազմը և ուսանողները լավ պատկերացում ունեն այս հասկացության վերաբերյալ թե՛ առաքելության, թե՛ *անդրագոգիայի* (մեծահասակների կրթության) տեսանկյունից և կարող են հստակ ձևակերպել այն:

Առաքելության երրորդ մասը վերաբերում է «անհատի շարունակական զարգացմանը» և «համակողմանի զարգացած անձի ձևավորման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանը»: Դրա նշանակությունը յուրաքանչյուր ուսանողի համար (առկա և հեռակա) հանդիպումների ժամանակ հստակ չձևակերպվեց, և սա սկզբունքի ու պրակտիկայի տեսանկյունից, թերևս, առաքելության ամենաքիչ մշակված մասն է: Կարելի է, իհարկե, ասել, որ հակասություն կա ավելի նեղ ուսումնական պլանի, որը ձգտում է ապահովել «աշխատունակությունը», և ավելի լայն ուսումնական պլանի միջև, որը փորձում է ապահովել «համակողմանի զարգացած անձի» ձևավորումը, և որ համալսարանը դեռևս պետք է լուծի այս մրցակցային խնդիրները:

Փորձագիտական խումբը հանդիպեց բազմաթիվ պարզ արտահայտվող, մտահոգ և մոտիվացված ուսանողների, այդ թվում՝ երկու *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք* ունեցող ուսանողների հետ: Եվրոպական համալսարանները լիովին ներառական հաստատություններ են, և այդ երկու ուսանողները ապացուցում են, որ հաշմանդամություն

ունեցող ուսանողները կարող են հաջողության հասնել ՎՊՀ-ում՝ մեծ պատիվ բերելով իրենց համալսարանին: Համալսարանը մշակում է նաև հեռավար ուսուցման աստիճան չշնորհող դասընթաց *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք* ունեցող ուսանողների համար՝ օգտագործելով Moodle համակարգը: Դա հրաշալի նախագիծ է, որը կնպաստի համալսարանի ներառական լինելուն և գիտահետազոտական արդյունքերի ձեռքբերմանը:

Ընդհանուր առմամբ, ծրագրերն արդիականացման փուլում են, մասնավորապես, մշակվում են ուսանողների պահանջների ավելի թափանցիկ և ուսանողակենտրոն մոտեցման ներդրման հնարավորություններ: Դեռևս աշխատանքներ կան կատարելու ակադեմիական ազնվության ուղղությամբ, բայց սա չի նշանակում, որ մենք ականատես ենք եղել անազնվության դրսևորման դեպքերի: Ֆակուլտետները և ամբիոնները **շատ լուրջ են վերաբերում ակադեմիական ազնվության խնդրին,** սակայն համալսարանը պետք է ապահովի, որ այս գործընթացը կիրառվի բոլոր ֆակուլտետների և ծրագրերի առկա ու հեռակա ուսանողների համար:

Հետազոտական գործունեությունը շատ սահմանափակ է թե՛ ազգային, թե՛ միջազգային արդյունքների, ինչպես նաև անձնակազմի և ուսանողների ներգրավվածության առումով: Ֆինանսավորում ստանալը դժվար է եղել, և համալսարանը, միգուցե, իր հետագա ֆինանսական միջոցները կենտրոնացնի խոստումնալից հետազոտական կազմի և հետազոտական արդյունավետ ուղղությունների վրա: (Տե՛ս խորհրդատվություն 3):

Միջազգայանցման գործընթացը սկսվել է բավականին լավ պրակտիկ գործունեությամբ: Հիմնվել է ներքին և արտաքին հարաբերությունների բաժինը և համալրվել համապատասխան աշխատակիցներով: Ուսանողները տեղյակ են միջազգային շարժունության հնարավորությունների և համալսարանի համար միջազգայանցման գործընթացի առավելության մասին: Բարձր կուրսերի ուսանողները իսկապես ողջունում են այդ գործընթացը և վերջին հինգ տարիների ընթացքում նկատել են զգալի առաջընթաց: Ուսանողները և անձնակազմը դրական են արտահայտվում մշակութային փոխանակման, մյուս ժողովուրդների մշակութային արժեքները ըմբռնելու, «ցանցում» ներգրավված լինելու, միջազգային և համաշխարհային համակարգ ինտեգրվելու կարևորության մասին: Իհարկե, կարելի է ավելի շատ պատրաստել ու մոտիվացնել ամբողջ անձնակազմին միջազգային ցանցային համակարգում և գործունեության մեջ ներգրավելու և միջազգային փորձը յուրաքանչյուր ամբիոնի ուսումնական պլանում ներառելու համար:

Կան միջազգային գործընկեր հաստատություններ և համաձայնագրեր: Որոշ ամբիոններ ներգրավված են կապեր հաստատելու և ցանցում համագործակցելու գործընթացում: Այս նախագծի մշակման համար համալսարանն ունի ներուժ և կարող է հենվել ներկայիս անձնակազմի անդամների փորձի ու փոխըմբռնման վրա:

Համալսարանի այլ նախաձեռնությունների վերաբերյալ որակական տվյալները, որոնք թույլ են տալիս տեղեկանալ վերլուծական գործունեության մասին, հասանելի են: Տվյալների հավաքագրման մեխանիզմը գործում է, սակայն այն դեռ լիովին մշակված և ներդրված չէ: Դեռևս շատ անելիքներ կան քանակական գործիքների սահմանման հետ կապված, որն անհրաժեշտ է վերլուծության և որակի ապահովման մասին տեղեկատվություն տալու համար: Որպես այդպիսին, ծրագրերի որակի մասին տեղեկատվության տրամադրման և վերլուծության կառուցվածքը բավականին հատվածաբար է և կարող է ավելի շատ օգուտ տալ, եթե լինի ավելի համակարգված և կոորդինացված:

Խորհրդատվություններ.

Դիտարկելով համալսարանի թույլ կողմերը՝ ներկայացնում ենք հետևյալ խորհրդատվությունները, որոնք կօգնեն համալսարանին ավելի լավ համապատասխանել միջազգային շրջանակին:

Առաքելություն և նպատակներ

- Համալսարանը պետք է փնտրի իր կարճաժամկետ նպատակին բնորոշ հակասությունների խնդիրը լուծելու (զբաղվածության խնդիրը ավարտելու ժամանակ), և երկարաժամկետ նպատակի համար «համակողմանի զարգացած անձի» ձևավորման ուղիներ:
- Համալսարանը պետք է մշակի նպատակներին (օրինակ՝ շրջանավարտների զբաղվածությունը) համապատասխան քանակական թիրախների սահմանման մեխանիզմ, ինչը թույլ կտա արձանագրել բարելավումները և գնահատել նախաձեռնությունները:

Կառավարում և վարչարարություն

- Համալսարանը պետք է բարձրացնի իր հեղինակությունը՝ դառնալով ամբողջությամբ ներառական հաստատություն: Այն պետք է ապահովի բոլոր ուսանողների իրավունքերն ու կարիքները անկախ նրանց կարողություններից և անկարողություններից: Դա կարելի է անել *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք* ունեցող ուսանողների և այլ փոքրամասնությունների ներկայացուցչությունը համալսարանի և ուսանողական խորհուրդներում ապահովելու միջոցով: Համալսարանը պետք է հաշվի առնի բոլոր այն ուղիները, որոնք թույլ կտան բավարարել հաշմանադամ ուսանողների կարիքները ֆիզիկական միջավայրը բարելավելու միջոցով: Առաջին քայլն այդ ուղղությամբ կարող է լինել ներառական քաղաքականության մշակումը:
- Համալսարանը պետք է ապահովի կատարողականի գնահատման առանցքային ցուցիչների առկայությունը, որոնք քանակական են և չափելի, վերհանվել են բաժինների միջև համագործակցության ընթացքում, որպեսզի թե՛ արտաքին, թե՛ ներքին շահակիցները նպաստեն և պատասխանատվություն կրեն դրանց իրականացման համար: Քանակակական թիրախների միջոցով շահակիցների հետ խորհրդատվություններն ու երկխոսությունները հնարավություն կտան համալսարանին ցույց տալ առաքելության և նպատակների ուղղությամբ տարվող զարգացումները:
- Համալսարանը պետք է հաշվի առնի, թե ինչպես կարելի է տվյալների հավաքագրումը ավելի արդյունավետ օգտագործել զարգացման միտումները բացահայտելու և նոր թիրախներ սահմանելու համար: Փորձագիտական խումբն առաջարկում է նման թիրախներ սահմանել ուսանողների հավաքագրման, հետազոտության արդյունքերի, ուսանողների նվաճումների, ուսանողների բավարարվածության և ուսուցման որակի նկատմամբ:

Մասնագիտության կրթական ծրագրեր

- Համալսարանը պետք է սկսի մշակել վիրտուալ ուսումնական միջավայր իր նյութական ռեսուրսները համալրելու համար, ինչպես դա հաճախ հանդիպում է եվրոպական համալսարաններում: Վիրտուալ ուսումնական միջավայրը թույլ է տալիս ուսանողներին առցանց ծանոթանալ դասընթացի համար անհրաժեշտ նյութերին, ծրագրային տեղեկատվության և համալսարանի կանոնակարգին: Այն կստեղծի

ուսանողների հետ արդյունավետ հաղորդակցման ուղիներ, ինչպես նաև կբարձրացնի ուսանողների փորձառությունը: ՎՊՀ-ն լավ հնարավորություններ ունի զարգացնելու փորձնական վիրտուալ ուսումնական միջավայրի նախագիծը՝ այն կառուցելով վերևում հիշատակված Moodle նախագծի հենքի վրա: Աշխատակազմի և ուսանողների տեղեկատվական տեխնոլոգիաների հմտությունները պետք է կիրառել նոր՝ «խառը» տիպի ուսումնական մոտեցում ստեղծելու համար, որը այսօր գործում է եվրոպական շատ համալսարաններում:

- Աշխատանքներ պետք է տարվեն մագիստրոսական թեզերը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ, հատկապես հաշվի առնվելով, թե ինչպես են ուսանողները բացատրում մեթոդաբանության վերաբերյալ իրենց ըմբռնումները և այս կամ այն մեթոդաբանական մոտեցման ընտրությունը իրենց հետազոտական խնդիրների վերհանման համար:

Ուսանողներ

- Համալսարանի կողմից տրամադրված տվյալները ցույց են տալիս, որ ուսանողների մեծամասնությունը ՎՊՀ-ում սովորում է հեռակա ուսուցման համակարգում: Պարզ դարձավ նաև, որ տարածաշրջանի տնտեսական պայմանների պատճառով այս միտումը կարող է շարունակվել: Համալսարանը պետք է ապահովի, որ հեռակա համակարգում սովորող ուսանողների փորձը համապատասխանի առկա համակարգում ուսանողների փորձին, և որ վերացվեն ուղղորդման և աջակցության տրամադրման ընթացքում ի հայտ եկած հակասությունները: Վիրտուալ ուսումնական միջավայրը հեռակա ուսանողների հետ հաղորդակցման հնարավորությունները բարելավելու և դեմ-առ-դեմ ուսուցումը խթանելու մեծ ներուժ ունի (face-to-face) (Տե՛ս Մասնագիտության կրթական ծրագրեր):

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

- Համալսարանն ունի զգալի մարդկային ռեսուրսներ, և խորհուրդ է տրվում, որ համալսարանը համակարգված և թիրախային մասնագիտական զարգացման միջոցով ուղիներ փնտրի անձնակազմի հետագա զարգացման համար: Թիրախները կարող են լինել ուսումնաօժանդակ կազմի լեզվի հմտությունների զարգացումը, որպեսզի նրանք կարողանան լիովին ներգրավված լինել միջազգային գործունեության մեջ և վարչական անձնակազմի գիտելիքների ու հմտությունների զարգացումը կրթության կառավարման և որակի ապահովման ոլորտներում, ինչը կնպաստի կայուն աշխատուժի ստեղծմանը: Վերջինս, իր հերթին, կնպաստի միջազգայանացման երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը:

Հետազոտություն և զարգացում

- Փորձագիտական խումբը ցանկանում է կոչ անել համալսարանին ընդլայնել իր հետազոտական գործունեությունը համակարգված և թիրախային ճանապարհով: Դա կարելի է անել՝ ջանքերը կենտրոնացնելով հիմնականում սահմանափակ թվով և խնամքով ընտրված գերազանցության կենտրոնների վրա: ՎՊՀ-ն ունի մանկավարժական հետազոտությանը զուգահեռ մեծահասակների մասնագիտական կրթության հետազոտական կենտրոններ ստեղծելու ներուժ: Այս կենտրոնները կարող են խթանել նորարարական հնարավորությունները և տալ նոր գիտելիքներ ու տեղեկատվություն համալսարանի ուսուցման և ուսումնառության գործընթացների մասին: Այս մոտեցումն ավելի շատ միջառարկայական հետազոտությունը խթանելու համար է:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

- Համալսարանը պետք է զգալի ներդրումներ կատարի ուսուցման ռեսուրսների և ֆիզիկական միջավայրի ոլորտում, եթե ցանկանում է բոլոր ուսանողների համար ստեղծել ապահով և առողջ ուսումնական միջավայր: Մասնավորապես, ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի ռեսուրսները նորացման կարիք ունեն, ինչը թույլ կտա ուսանողներին ունենալ պատշաճ ուսումնական պլան:

Որակի ներքին ապահովման համակարգ

- Որակի ապահովման կենտրոնը նշանակալի դեր է խաղում անձնակազմի և ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովման գործում: Մասնավորապես, համալսարանը պետք է մշակի գնահատման հստակ ուղեցույցներ ակադեմիական ազնվության ապահովման համար: Դա կարող է լինել ուսանողների համար նախատեսված ձեռնարկ, որտեղ բացատրվում է, թե ինչ է ակադեմիական ազնվությունը և անարդար փորձը, ինչպես կարելի է խուսափել անարդարությունից, և որոնք են հավանական պատժամիջոցները կանոնակարգը խախտելու դեպքում: Խաչաձև ստուգման կամ հավասարը հավասարին (peer-to-peer) գնահատման ձևերը կարգավորող և հետևողական գործընթացները թույլ կտան պաշտպանել ուսանողների կողմից հարցականի տակ դրվող պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական դատողությունները:

Փորձագիտական խմբի ղեկավար

15 հուլիսի 2015 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՎՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Լիլիթ Զաքարյան**, պատմ.գիտ.թեկնածու, Հյուսիսային համալսարան, Որակի ապահովման վարչության պետ, Հայաստան, խմբի ղեկավար,
2. **Ալան Հոռու**, մանկ. գիտ. դոկտոր, Բաթ Սպա համալսարան, Կրթության և մանկավարժական հետազոտությունների դեպարտամենտի ղեկավար, Միացյալ Թագավորություն, փորձագիտական խմբի անդամ,
3. **Վարուժան Աթաբեկյան**, ֆիզ.մաթ.գիտ.դոկտոր. ԵՊՀ, Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ, Հայաստան, փորձագիտական խմբի անդամ,
4. **Սուսաննա Հովհաննիսյան**, բանաս.գիտ.դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, առաջատար գիտաշխատող, Հայաստան, փորձագիտական խմբի անդամ,
5. **Սիմա Բոսնոյան**, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, «Կրթության կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, Հայաստան , փորձագիտական խմբի անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է **Անահիտ Ութմազյանը**:

Թարգմանությունը կատարել է **Լիլիթ Մուրադյանը**:

Արձանագրությունները կազմել է **Սրբուհի Զանջուղազյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամներն ու քարտուղարը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ՎՊՀ-ը 2015 թ. փետրվարի 23-ին դիմել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ հավատարմագրման համար՝ ներկայացնելով դիմում-հայտը, լիցենզիայի և դրա հավելվածների ու հրամանների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը հավատարմագրման կարգի պահանջներին՝ դիմումում լրացված տվյալները, կից փաստաթղթերը և համալսարանի կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

ԲՈՒՀ-ի դիմումն ընդունելու մասին որոշման հիման վրա կազմվել և հաստատվել են հավատարմագրման գործողությունների ժամանակացույցն ու գործընթացի ծախսերի նախահաշիվը: 2015թ. մարտի 17-ին կնքվել է պայմանագիր ՈԱԱԿ-ի և ՎՊՀ-ի միջև:

Նախապատրաստական փուլ

ՎՊՀ-ն ինքնավերլուծությունը սկսել է իրականացրել 2013թ. «Որակի ներքին ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Վերանայված ինքնավերլուծության անգլերեն ու հայերեն տարբերակները և հավելվածների փաթեթը ներկայացվել են ՈԱԱԿ 2015թ. ապրիլի 15-ին: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ տեխնիկական առումով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքի հիման վրա 2015թ ապրիլի 28-ին ինքնավերլուծության զեկույցը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել են:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով: 2015թ. ապրիլի 30-ին ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին: Գնահատումն իրականացվել է 2015թ. մայիսի 1-ից մինչև 2015թ. մայիսի 29-ն ընկած ժամանակահատվածում: Այդ ժամանակամիջոցում փորձագիտական խումբը անցել է թվով 5 վերապատրաստումների փուլ, շաբաթը մեկ անգամ պարբերական հանդիպումներ է ունեցել՝ քննարկելու բուհի ինքնավերլուծությունը և կից հավելվածների փաթեթը: Արտասահմանցի փորձագետի կողմից վերհանված խնդիրները խմբի ղեկավարի կողմից ներառվել են միասնական նախնական գնահատման հաշվետվության տեքստում: Արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա խնդիրները և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկումներ, այցելություններ բուհի կառուցվածքային ստորաբաժանումներ և այլն:

Բուհի ինքնավերլուծությունը

Ինքնավերլուծությունը հիմնականում լրացված է ճշգրիտ և յուրաքանչյուր չափորոշիչ հաշվի է առնված: Հավելվածներում առկա են փաստատղթում տեղ գտած ձևակերպումների բավարար ապացույցներ:

Ընդհանուր առմամբ, քննադատական մոտեցմամբ ներկայացված ինքնավերլուծության զեկույցը փորձագիտական խումբը համարեց օգտակար փաստաթուղթ՝ ՎՊՀ-ի մասին տեղեկատվություն ձեռք բերելու և բուհի հետ քննարկումներ կազմակերպելու համար:

Այցի պլանի համաձայնեցում

2015թ. մայիսի 11-ից 15-ն ընկած ժամանակահատվածում ՎՊՀ-ի հետ առցանց քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը2, ներկայացվել են

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումներն, ուր ցանկանում են այցելել փորձագետները, քննարկվել են նաև այլ կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության հարցեր:

Այցին նախորդող օրը՝ մայիսի 31-ին համակարգողը և փորձագիտական խմբի ղեկավարն այցելել են համալսարան դիտարկելու խմբին տրամադրված սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը փորձագիտական խմբի տեղացի փորձագետները հանդիպել են միջազգային փորձագետի հետ: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել և վերջնականացրել դուրս բերված հիմնական հարցերի/խնդիրների ցանկը, որոշել յուրաքանչյուր չափանիշին վերաբերող հարցերի պարզաբանման պատասխանատուին, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախային խմբերի:

Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ 1) համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**, 2) համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2015թ. հունիսի 1-4-ն ընկած ժամանակահատվածում:

Այցը մեկնարկել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումներով: Հանդիպումներն են տեղի ունեցել ամբիոնի վարիչների, ինքնավերլուծություն իրականացնած աշխատանքային խմբի, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների, գործատուների ներկայացուցիչների, առկա և հեռակա ուսուցման ձևերով սովորող, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողների հետ: Փորձագիտական խումբը հանդիպման մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով: Ժամանակացույցով նախատեսված և հայտարարված բաց հանդիպման շրջանակում փորձագիտական խումբի հետ հանդիպելու ցանկություն էին հայտնել համալսարանի մի շարք աշխատակիցներ՝ դեկաններ, ամբիոնի վարիչներ, ՊԴ և ուսումնաօժանդակ կազմերի ներկայացուցիչներ, ներհամալսարանական բաժինների, կենտրոնների ղեկավարներ:
Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4], մասնակցել է մագիստրոսական թեզի պաշտպանությանը, «Լրագրություն» մասնագիտության ուսանողների ինքնուրույն աշխատանքների ցուցադրմանը, ծանոթացել են:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների բաց քննարկումները:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի եղանակը:

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագիտական խումբի ղեկավարը գործընթացի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ փաստերի վերհանման, դատողությունների և գնահատականի ձևավորման գործում, ինչպես նաև արձագանքել են ամբողջական տարբերակին: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփոփման ժամանակ:

Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք: Երկու փաստաթղթերն էլ թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքը և մոտեցումները զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի տեղացի բոլոր անդամների կողմից հավանության արժանացած ամբողջականացված նախնական զեկույցը թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: Նրա դիտողությունների հիման վրա նախնական զեկույցը վերախմբագրվել է, և ներկայացնում է գնահատման հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը:

Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 2015թ. հուլիսի 15-ին:
Ս.թ. հուլիսի 28-ին համալսարանը հայտնել է իր համաձայնությունը փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի հետ:

Վանաձորի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման վերջնական զեկույցը հաստատվել է փորձագիտական խմբի կողմից 2015թ. օգոստոսի 13-ին:

Համակարգողի ստորագրությունը

13.08.2015 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Համառոտ տեղեկատվություն հաստատության վերաբերյալ

Պատմություն: 1969թ. ՀՍՍՀ պետական մանկավարժական հեռակա ինստիտուտի (հիմնադրված 1936թ.) հիման վրա կազմակերպվում է Կիրովականի մանկավարժական ինստիտուտը: Կիրովական են տեղափոխվում հեռակա ուսուցման հինգ ֆակուլտետներ՝ հայոց լեզվի և գրականության, ֆիզմաթ, կենսաբանության, պատմության, մանկավարժության: 1970թ ընդունելություն է կազմակերպվում նաև ցերեկային ուսուցմամբ: 1988թ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայ ուսանողությունը և դասախոսական կազմը տեղափոխվում է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ: 2006 թվականից բացվում է ասպիրանտուրա՝ 6 մասնագիտությունների գծով, իսկ 2010թ. Ինստիտուտն իրավունք է ստանում իրականացնելու միջին մասնագիտական կրթական ծրագիր: Այդպիսով տարածաշրջանում դառնում է առաջին կրթական համալիրը, որը կրթություն է կազմակերպում ՈԱԾ-ի 5-8 մակարդակներով:

Առաջին համալսարանական մասնագիտության հիմքը դրվում է 1983թ. ինստիտուտի ռեկտոր ակադեմիկոս Ս.Մերգելյանի ջանքերի շնորհիվ, երբ բուհում բացվում է «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունը: 2011-12 ուսումնական տարվանից սկսած ներդրվել են համալսարանական մի շարք այլ ոչ մանկավարժական բնույթի մասնագիտություններ:

ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 30-ի թիվ 485-Ն որոշմամբ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը վերանվանվում «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»:

ՎՊՀ-ն որպես կրթական և գիտական գործունեություն իրականացնող պետական հաստատություն, ունի իր նպատակներն ու խնդիրներն արտացոլող առաքելություն:

Համալսարանն իր գերակա խնդիրն է համարում կրթության որակի բարձրացումը, աշխատաշուկայի պահանջարկի բավարարումը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու հնարավորության մեծացումը:

Հաստատությունն այսօր կրթական ծառայություններ է մատուցում ուսուցման առկա և հեռակա ձևերով՝ պետական կրթական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով բակալավրիատի 28 և մագիստրոսական 13 մասնագիտությունների կրթական ծրագրերով:

Ինքնավերլուծության, ռազմավարական ծրագրի և այլ փաստաթղթերի մեջ սահմանված են բազմաթիվ դրույթներ, որոնք արտացոլում են համալսարանի ձգտումներն ու հավակնությունները գործունեության տարբեր ոլորտներում:

Կրթություն: ՎՊՀ-ն նախատեսում է իրականացնել շուկայամետ կրթություն, որը կհամապատասխանի Բոլոնյան գործընթացի և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի

պահանջներին: Բուհը կարևորում է կրթական վերջնարդյունքների և համադրելիությունն այլ նմանատիպ ծրագրերի հետ և դասախոսների ու ուսանողների շարժունությունը:

Առաքելության և կրթական ծրագրերի իրականացման համար բուհը նպատակադրել է ունենալ որակյալ դասախոսական կազմ, ապահովել սահուն սերնդափոխություն, ուստի պարբերաբար միջոցներ է ձեռնարկում դասախոսական կազմը գիտական աստիճան և կամ կոչում ունեցող հաստիքային դասախոսներով համալրելու ուղղությամբ, կազմակերպում է վերապատրաստումներ:

Բուհը ձգտում է արմատապես վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդների և մոտեցումների ամբողջ փաթեթը, որպեսզի գործընթացը դառնա առավելապես ինտերակտիվ և ուսանողին պատրաստի մասնագիտական գործունեությանը: ՄԿԾ-ների մշակման և ներդրման ռազմավարության մեջ կարևորվում են ուսումնառության և դասավանդման բազմաբնույթ մեթոդները և տեխնոլոգիաները: Ներկայումս բուհում մշակվում է արդիական մեթոդների բանկ, որը որպես ուղեցույց նախատեսվում է տրամադրել համալսարանի բոլոր ամբիոններին:

Համալսարանը որակյալ կրթության համար կարևորվում է կրթական միջավայրի ապահովումը.

- գրադարանային ֆոնդի թարմացում, հարստացում,
- անհրաժեշտ սարքավորումների, գույքի ձեռք բերում,
- լսարանային պայմանների, սանիտարա-հիգիենիկ, առողջապահական և անվտանգության ապահովման համար նախատեսված ծախսերի բաշխում,
- ֆինանսական միջոցների համապատասխանեցում հաստատության ռազմավարական նպատակներին: Այս ոլորտում բուհի նպատակների ամբողջապես իրականցման հարցում դեռևս կան պրոբլեմներ:

Հետազոտություն. Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ գիտահետազոտական գործունեության հիմնական նպատակներն են՝ գիտական բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների կայուն աճի և սահուն սերնդափոխություն ապահովում, որպես առաջնահերթություն՝ հայագիտության ոլորտի զարգացում: Բուհի զարգացման 2014-2018 թթ. հայեցակարգում սահմանված են նաև հետևյալ նպատակները. գիտության ֆինանսավորման ծավալների ավելացում, ֆինանսավորման ձևերի և մեխանիզմների հստակեցում, ֆինասավորման արդյունավետության բարձրացում, գիտության ոլորտի նոր ենթակառուցվածքների արդիականացում, գիտության զարգացման գերակայությունների հստակեցում, գիտության ոլորտի գիտական անկախ փորձաքննության համակարգի ստեղծում, գիտության և կրթության ինտեգրում:

Միջազգայնացում. ՎՊՀ-ի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման քաղաքականությունը բխում է Համալսարանի առաքելությունից և կանխորոշվում է հետևյալ գերակայություններով. միջազգային կապերի ընդլայնում, տարածաշրջանային և միջազգային համալսարանական ցանցերի ստեղծում, եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ համագործակցության խթանում, դրամաշնորհային նախագծերի որոնում և մշակում, միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվական ծառայության բարելավում, արտասահմանյան բուհերի հետ համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի մշակում և իրականացում, որակավորման աստիճանների համատեղ շնորհման գործընթացների ակտիվացում, ուսանողների և դասախոսների շարժունության խրախուսում:

Որակի ապահովում. ՎՊՀ կրթության որակի ապահովման համակարգի նպատակն է աջակցել բուհի հանրային վստահության, պատասխանատվության, մրցունակության ապահովմանը և որակյալ մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես բուհի հիմնական հավակնություններ և նպատակներ:

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 Մինչև 2014 թ. տվյալ ուսումնական հաստատությունը գործել է որպես Վանաձորի Հ.Թումանյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ:

Մանկավարժական մասնագիտություններով դիմորդների թվի նվազումը և բուհի կողմից իրականացրած տարածաշրջանի աշխատաշուկայի հետազոտությունները ցույց են տվել, որ աշխատաշուկան հագեցած է մանկավարժական կադրերով, և կա այլ ոլորտների մասնագետների կարիք /բանկային աշխատողների, դեղագետների, լրագրողների և այլն/: Աշխատաշուկայի նոր պահանջներին բավարարելու համար բուհը ընդլայնել է մասնագիտությունների ցանկը: 2011 թ.-ից բուհը սկսել է փորձնական իրականացնել ոչ մանկավարժական «Թարգմանչական գործ», «Լրագրություն», «Կառավարում», «Դեղագործական քիմիա», «Սոցիալական աշխատանք» մասանագիտությունների կրթական ծրագրեր:

ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 30-ի թիվ 485-Ն որոշմամբ մանկավարժական ինստիտուտը դարձել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» և հաստատվել է ՎՊՀ-ի նոր կանոնադրությունը:

2014 թ. մշակվել է ՎՊՀ-ի նոր առաքելությունը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին և ներկայացված է ՎՊՀ-ի 2014-2018 թթ. զարգացման հայեցակարգում: Համալսարանի առաքելությունը միտված է.

- ապահովել կայուն զարգացում և ինտեգրվել եվրոպական միասնական կրթական տարածք, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնել *շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությունը,*
- հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ պատրաստել համար, *ձևավորել ուսանողակենտրոն միջավայր,*
- ընդունելով *հասարակության առջև իր պատասխանատվությունը,* նպաստել անհատի շարունակական զարգացմանը, ստեղծել նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար:

1.2 Ուսումնական հաստատությունը ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և ուսումնասիրության հիման վրա հստակեցրել և վերանայել է իր առաքելությունը, նպատակներն ու խնդիրները: Ուսումնասիրվել է Լոռու մարզի զարգացման

հեռանկարային ծրագիրը, հանդիպումներ են կազմակերպվել մարզի գործատուների հետ, շրջանավարտների հարցում է անցկացվել: Արտաքին շահակիցներն ընդգրկված լինելով հաստատության կառավարման մարմիններում, նույնպես մասնակցել են առաքելության մշակմանը: Քննարկումներ են կազմակերպվել նաև վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողության շրջանում: Քննարկումների արդյունքում տեղ գտած առաջարկություններն արտացոլվել են առաքելության մեջ:

1.3 Մինչև 2014 թ. բուհի առաքելության և ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների գնահատման հաստատված ընթացակարգեր և հստակ մեխանիզմներ չեն եղել: ՌԾ իրականացման գնահատականը ներկայացվել է ռեկտորի ամենամյա հաշվետվություններում /բուհի կայքում ներկայացված են 2010-2014 թթ. հաշվետվությունները/: Նոր առաքելությանք և նպատակների իրականացման արդյունքները գնահատելու և վերահսկելու համար մշակվել է Ռազմավարության իրականացման պլան, որտեղ ներառնված են իրականացման ինդիկատոր/ցուցիչներ:

Առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնահատելու համար 2015 թ. հաստատվել է ըստ ռազմավարական ուղղությունների «Աուդիտի կազմակերպման ընթացակարգ», իսկ ՌԾ-ի իրականացման ընթացքը վերահսկելու համար՝ մոնիթորինգի ընթացակարգ: Ստեղծվել են մոնիթորինգային խմբեր, որտեղ ներգրավված են նաև ուսանողներ: Ուսանողների վրա դրվում են որոշակի պարտականություններ՝ հարցումների կազմակերպում, տվյալների հավաքագրում և վերլուծություն:

Աուդիտի և մոնիթորինգի մեխանիզմները փորձարկվել են, ինչի արդյունքում բացահայտվել է գնահատման մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը:

Դատողություններ: Ուսումնական հաստատությունը որպես տարածաշրջանային բուհ հստակ պատկերացնում է իր դերն ու կարևորությունը մարզի համար: Մինչև 2014 թ., լինելով մանկավարժական ինստիտուտ, իրականացրել է իր առաքելությունը՝ ապահովելով մարզը մանկավարժական կադրերով: Մարզի ուսուցիչների շուրջ 70%-ը և ՎՊՀ դասախոսական կազմի 48,7% Վանաձորի մանկավարժական ինստիտուտի շրջանավարտներ են:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում 2014 թ. աշխատաշուկայի կարիքների վերհանման արդյունքում ուսումնական հաստատության տեսակի և առաքելության փոփոխումը և համալսարան դառնալը, ինչպես նաև մասնագիտությունների ցանկի ընդլայնումը: Համալսարանի անձնակազմը ջանք չի խնայում բուհի առաքելությանը հասնելու համար, և ակնհայտ է, որ համալսարանը գտնվում է շարունակական զարգացման փուլում: Թեպետ բուհը ճիշտ է ընկալում իր առաքելությունը տարածաշրջանում, սակայն առաքելության ձևակերպումը հստակ չէ: ՎՊՀ 2014-2018 թթ. զարգացման հայեցակարգում, որն իդեպ բուհի կողմից ընկալվում է նաև որպես ռազմավարական ծրագիր, բուհը հստակ նշել է Հայաստանի հյուսիսային շրջանների համար իր դերակատարումը, սակայն առաքելության մեջ դա որևէ կերպ արտահայտված չէ: Իրականացնելով իր առաքելությունը՝ բուհը հետևողական աշխատանք է տանում «ուսանողակենտրոն» միջավայրի ստեղծման ուղղությամբ և տարաբնույթ ծառայություններ է մատուցում մարզի հասարակությանը: Բուհի վարած քաղաքականությունը ուղղված է ՈԱՇ-ի 6, 7, 8-րդ մակարդակներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նոր առաքելության մշակման փուլում իրականացված քննարկումները ներքին և արտաքին շահակիցների հետ, ինչի արդյունքում հաշվի են առնվել շահակիցների կարիքները:

Փորձագիտական խումբը նշում է, որ բուհը չունի զարգացման հայեցակարգին համահունչ ռազմավարական ծրագիր, իր հստակ ժամանակացույցով:

Բուհի առաքելության և նպատակների գնահատման մեխանիզմները նոր են ներդրվել: Գնահատման և վերահսկողության համար մշակված Ռազմավարության իրականացման պլանում նշված չեն գործողությունները, իրականացման քայլերը, դրանց պատասխանատուները և տրամադրվող միջոցները, իսկ կատարողականի ցուցիչները հստակ և չափելի չեն: Անհրաժեշտ է նշել, որը բուհը փորձարկել է մշակված մեխանիզմները, նկատել դրանց թույլ կողմերը և այժմ աշխատանքներ է տանում առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմների բարելավման ուղղությամբ, վերանայվում են նաև ռազմավարության կատարողականի ցուցիչները:

Եզրահանգում. Հաշվի առնելով, որ ՎՊՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը հիմնականում համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին, առաքելությունը, նպատակներն ու խնդիրներնի արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, իսկ գնահատման մեխանիզմները բարելավման փուլում են, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 ՎՊՀ կառավարման համակարգն ունի որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց: ՎՊՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ Կառավարության 30.04.2014թ. թիվ 485-Ն որոշմամբ հաստատված ՎՊՀ-ի կանոնադրությանը համապատասխան: ՎՊՀ-ում գործում են նաև կառավարումն ու վարչարարությունը կարգավորող հետևյալ կանոնակարգերը՝ Վանաձորի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ, Վանաձորի պետական համալսարանի ռեկտորատի կանոնակարգ, Մշտադիտարկման անցկացման կանոնակարգ: Մշակված են նաև ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը /ընդհանուր բաժնի, արխիվի, գրադարանի, գիտական կաբինետի և այլն/: Կարգերի մի մասը մշակվել է, երբ ուսումնական հաստատությունը եղել է մանկավարժական ինստիտուտ, մյուս մասը արդեն վերամշակվել է համալսարանի կարիքներին համապատասխան: Մշակված են դեկանների և ամբիոնների վարիչների ընտրության կարգերը: Կանոնակարգված են ՎՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման գործընթացները: Բուհը չունի մշակված կառավարման էթիկայի կանոններ:

ՎՊՀ-ն իր առջև դրված նպատակների իրականացման համար հիմնականում ապահովված է անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով, սակայն կառավարման մարմիններին դեռևս չի հաջողվել ապահովել բուհը անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներով:

ՎՊՀ-ում ֆինանսական ռեսուրսները առաջանում են ուսանողների վարձավճարներից, պետական ֆինանսավորումից և այլ աղբյուրներից: Հիմնական ֆինանսավորման աղբյուրը ուսանողների վարձավճարներն են: Բուհը չունի մշակված ֆինանսատնտեսական հստակ քաղաքականություն, ֆինանսների բաշխումը իրականացվում է ֆինանսատնտեսական հանձնաժողովի եզրակացությունների և խորհրդի կողմից ընդունված որոշումների հիման վրա: Արտաքին ֆինանսական աուդիտ բուհում չի անցկացվել, ուստի ծախսերի արդյունավետության գնահատում չի արվել:

Կառավարման բարձր օղակների աշխատանքի պայմանները բարվոք վիճակում են՝ վարչական մարմիններին հատկացվել է առանձին մասնաշենք: Սակայն դեկանատների և ամբիոնների մակարդակով աշխատանքային պայմանները հեռու են բավարար լինելուց: Թեպետ բուհը աշխատավարձին հատկացնում է բյուջեի մոտ 80 տոկոսը, աշխատավարձը մնում է ցածր, այն դեպքում, երբ աշխատանքի ծավալը աճում է: Բուհը փորձում է գտնել լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ, դեռևս հաջողության չի հասել:

Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար բուհը դեռևս չի ներդրել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, սակայն դա նախատեսվում է և նախագիծը փորձագետներին ցուցադրվեց այցի ընթացքում:

2.2 Բուհը հնարավորություններ է ընձեռում դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, ուսանողներն ընդգրկված են որոշում կայացնող հանձնաժողովների և խորհուրդների կազմերում: Դասախոսներն ու ուսանողներն անդամակցում են ՎՊՀ գիտխորհրդին: Բուհն ապահովում է ԳԽ-ում ուսանողների մասնակցությունը առնվազն 25 տոկոսի չափով: Բուհի ռեկտորը և դեկանները պարբերաբար հանդիպում են ուսանողության հետ և լսում նրանց առաջարկներն ու պահանջները: Սակայն վերոնշյալ գործընթացին մասնակցում են առկա ուսուցման ձևով սովորող ուսանողները, հեռակայի ուսանողները, որոնց թիվը տարեցտարի աճում է, որոշում կայացնող մարմինների աշխատանքին չեն մասնակցում /թեպետ դրա համար արգելքներ չկան/:

Բուհի կայքում տեղադրված կանոնակարգերը, ծրագրերը, ռեկտորատի և գիտխորհրդի նիստերի արձանագրությունները դասախոսներին և ուսանողներին ապահովում են անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Ինչպես պարզ դարձավ ուսանողների և դասախոսների հետ փորձագետների հանդիպումից հարցումների և ֆոկուս խմբերի ընթացքում բարձրացված հարցերը երբեմն դրական լուծում են ստանում, երբեմն՝ ոչ:

2.3 Համալսարանը չունի հստակ երկարաժամկետ պլանավորում՝ ռազմավարական ծրագիր և 2014-2018թթ զարգացման հայեցակարգը բուհի կողմից ընդունվում է որպես ռազմավարական պլան: Պլանի գործողությունների իրականացման ժամանակացույցը նույնպես բացակայում է:

Թեև ամբիոնների կողմից կազմվում են միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, բայց դրանք միշտ չէ, որ բխում են բուհի ռազմավարությունից, բացի այդ կարճաժամկետ պլանները հաճախ իրենցից ներկայացնում են մեկ գործողության պլանավորում:

Առաքելության և նպատակների իրականացման և գնահատման մեխանիզմները նոր են մշակվել և դեռևս ներդրման փուլում են:

Հայեցակարգի իրականացումը վերահսկելու համար ստեղծվել է Ռազմավարության իրականացման պլան, որը մշտադիտարկման ձև է: 2015 թ. փետրվարի վերջին հաստատվել է Մշտադիտարկման անցկացման կանոնակարգը, որով նախատեսվում է կատարել համալսարանի ինստիտուցիոնալ գործընթացների գնահատում՝ ըստ սահմանված չափանիշների և չափորոշիչների: Կանոնակարգում նկարագրված են մշտադիտարկման միջոցները, գործունեության սխեման, կազմակերպչական կառուցվածքը և վերլուծության մեխանիզմները:

2.4 Որոշումները կայացվում են ամբիոնների, ֆակուլտետային խորհուրդների, ռեկտորատի և գիտխորհրդի նիստերում քննարկման արդյունքում, սակայն բուհի վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կրում է ոչ թե կանոնավոր կամ համակարգված բնույթ, այլ տարերային: Չի արվում բուհի վրա ազդող բոլոր գործոնների համադրական վերլուծություն:

Այսպես, օրինակ, ՄԿԾ-ներում կան աշխատաշուկայի վերլուծության հետ կապված տվյալներ, սակայն շրջանավարտների կարիքները դրանցում ներառնված չեն շրջանավարտների բազայի բացակայության պատճառով: Ոչ բոլոր գործատուներն են մոտիվացված մասնակցելու բուհի կողմից կազմակերպվող քննարկումներին: /գործատուների և շրջանավարտների հետ թույլ կապը մատնանշված է նաև ինքնավերլուծության մեջ/: Բուհի հետազոտություններում բացակայում է ժողովրդագրական տվյալների հեռանկարային վերլուծությունը: Չի կարելի ասել, որ «արտաքին միջավայրի սկանավորում» է արվում, որը հիմք է հանդիսանում պլանավորման բարելավման համար:

Դրա հետ մեկտեղ կա նաև դրական փորձ: Օրինակ, իրավագիտության ֆակուլտետի բացումը հիմնված էր կոնկրետ հետազոտական տվյալների վրա՝ սոցիոլոգների ներգրավմամբ:

2.5 Առկա է «Որակի կառավարման համակարգի կանոնակարգը», (հաստատվել է Գիտական խորհրդի կողմից 2015թ. փետրվարի 27-ին), ինչպես նաև՝ ՎՊՀ-ի որակի ապահովման համակարգի ներդրման և կատարելագործման ռազմավարություն 2014-2018թթ.:

Փաստաթղթերով նախատեսվում է «պարբերաբար ստուգել և վերլուծության ենթարկել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից որակի բարելավմանը միտված գործընթացների արդյունքները, անցկացնել ուսումնական գործընթացի տեղեկատվական, նյութատեխնիկական, կադրային, ուսումնամեթոդական ոլորտի ուսումնասիրություններ, վերահսկել կառավարման համակարգի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող գործընթացները, համակարգել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում որակի կառավարման մեթոդների ներդրման աշխատանքները»: Կանոնակարգերը նոր են ընդունվել և գործնականում կիրառման հիմքեր դեռևս առկա չեն:

2.6 Կրթական բարեփոխումների շրջանակներում «թյունինգ» մեթոդաբանությամբ մշակվել է մասնագիտության կրթական ծրագրերի հայեցակարգը և ներդրման ռազմավարությունը: Որոշ ՄԿԾ-ների մասնագրեր անցել են փորձաքննություն ԵՊՀ-ի համապատասխան մասնագիտական ամբիոններում: Ստացված դիտողությունները հիմք են հանդիսացել ՄԿԾ-ների վերանայման համար: Ներդրման փուլում են ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմները: Մասնագիտության կրթական ծրագրի ներքին աուդիտի կազմակերպման

ընթացակարգն ընդունվել է Գիտխորհրդի կողմից 2015 թ. փետրվարին: ՄԿԾ-ների աուդիտի անցկացման փորձ բուհը ձեռք է բերել 2013 թ.-ից: Աուդիտի կանոնակարգը մշակվել է այդ փորձի հիման վրա: Աուդիտի միջոցով նախատեսվում է 4 տարին մեկ գնահատել բակալավրի ՄԿԾ-ները, իսկ մոնիթորինգի միջոցով իրականացնել ընթացիկ վերահսկողություն՝ ծրագրից շեղումներն ու վտանգները ժամանակին հայտնաբերելու և գործընթացի բարելավմանն ուղղված քայլեր ձեռնարկելու համար:

2.7 Բուհում մշակված են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ, սակայն դրանք դեռևս ներդրման փուլում են: Տեղեկատվության գնահատման մեխանիզմներ նախատեսվում է ներդնել և՛ «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական Համալսարանի որակի մշտադիտարկման անցկացման» կանոնակարգով, և՛ «Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգով»: Սակայն երկուսն էլ հաստատվել են 2015 թ. փետրվարին և կիրարկման պատմություն դեռևս չունեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ բուհում կառավարման համակարգի, վարչական կառույցների արդյունավետության ապահովման համար մշակվել են մի շարք կանոնակարգեր, սակայն դրանց մեծ մասը հաստատվել է 2015 թ. և կիրարկման պատմություն դեռևս չունեն, ուստի բուհը դրանց արդյունավետությունը դեռևս չի գնահատել:

Փորձագիտական խումբը համոզվեց, որ ՎՊՀ-ն ունի մասնագիտական և մարդկային բարձր որակներով օժտված անձնակազմ, որն իզորու է իրականացնել բուհի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները: Բուհի պրոռեկտորները, որոնց հետ հանդիպել է փորձագիտական խումբը, միջին օղակների ղեկավարների մեծ մասը պարտաճանաչ, պատշաճ մակարդակով կատարում են իրենց պարտականությունները: Սակայն բուհի առաքելության և նպատակների իրականացման համար ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցվածության աստիճանը մտահոգիչ է:

Բուհը դասախոսներին և ուսանողներին ընձեռում է հնարավորություններ մասնակցելու իրենց վերաբերող որոշումների կայացմանը: Փորձագետների կարծիքով՝ բուհի որակի ապահովման կառույցի կողմից անցկացրած հարցման թերթիկներում կատարված գրառումները կարիքների վերհանման, առաջարկությունների ներկայացման, գործընթացների գնահատման ուղղությամբ հսկայածավալ ինֆորմացիա են տրամադրում: Սակայն նկատվում է ակնհայտ դանդաղկոտություն բացահայտված կարիքների բավարարման հարցում: Կոլեգիալ կառավարումը դեռևս զիջում է միանձնյա որոշումների կայացմանը:

Բուհն ունի զարգացման հայեցակարգ, սակայն չունի դրա հիման վրա մշակված ռազմավարական ծրագիր, հստակ մշակված իրագործման ժամանակացույց: Կարճաժամկետ պլանավորումը հաճախ հատվածային, ըստ քայլերի բնույթ է կրում, ինչը ոչ համակարգային մոտեցման վտանգ է առաջացնում: Փորձագիտական խումբը կարծում է, որ պլանավորման թերությունների պատճառով է, որ առաքելության, նպատակների և իրականացվող գործողությունների փոխկապակցվածությունը թույլ է արտահայտված:

Փորձագիտական խումբը գտնում է, որ մի քանի ՄԿԾ-ների պիլոտային ծրագրով աուդիտի անցկացումը լավ փորձ է հանդիսացել բուհի համար հետագայում այն կիրառելու համար: Սակայն աուդիտի և մշտադիտարկման գործընթացների կանոնակարգերը նոր են ներդրվում: Փորձագետները գտնում են, որ կառավարման համակարգի արդյունավետության

բարձրացմանը էապես կարող է նպաստել նախատեսվող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը:

Փորձագիտական խմբի կարծիքով, ռեկտորի հաշվետվության մեջ ներկայացված և իրականացված միջոցառումները դեռևս բավարար չեն բացառելու կոռուպցիոն երևույթների ռիսկերը:

Այսպիսով, ընդունելով հանդերձ, որ կարճ ժամանակահատվածում ուսումնական հաստատությունը մեծ առաջընթաց ունի կառավարման բարելավմանը նպաստող կանոնակարգերի մշակման ուղղությամբ, այդուհանդերձ պետք է արձանագրել, որ պլանավորման, իրականացման, ստուգման և բարելավման մեխանիզմները կառավարման համակարգում դեռևս լիարժեք ներդրված չեն: Այդ պատճառով, բուհի գործունեության մյուս բոլոր ոլորտների ուղղությամբ իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման դժվարություններ են ծագում: Լուրջ թերություններ կան ֆինանսական ռեսուրսների բաշխման հարցում: Այն չի իրագործվում ըստ ռազմավարական առաջնահերթությունների, վտանգելով դրանց իրականացումը:

Եզրահանգում. Հաշվի առնելով, որ կառավարման համակարգի, վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետությունը բարձր չէ, կառավարման համակարգում դեռևս լիարժեք ներդրված չեն պլանավորման, իրականացման, ստուգման և բարելավման մեխանիզմները, բուհը չունի կառավարման էթիկայի մշակված կանոններ, չի իրականացնում գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատության առաքելության ու նպատակների իրականացման համար կան վտանգներ: ՎՊՀ-ի գործունեության այլ ոլորտներում հանդիպած թերությունները մեծ մասամբ բխում են կառավարման համակարգի անկատարությունից:

Եզրակացություն. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգ այնացմանը:

Փաստեր

3.1 Համալսարանի 5 ֆակուլտետներում իրականացվում է 40 կրթական ծրագիր, որոնցից 27-ը բակալավրի, 13-ը՝ մագիստրոսի: 2015 թ-ին ընդունելություն է իրականացվելու նաև 3 նոր համալսարանական մասնագիտությունների գծով (քայլը ռազմավարական է): «Սերվիս», «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա», «Հոգեբանություն» ՄԿԾ-ների ներդրումը համահունչ է Լոռու մարզի զարգացման ծրագրին:

ՄԿԾ-ների մշակման, հաստատման և ներդրման ուղղությամբ բուհը հաստատել է հատուկ ռազմավարություն, որում մանրամասն նկարագրված է ՄԿԾ ստեղծման ընթացակարգը: Դրա հիման վրա մշակվել են նաև ծրագրերի մշակման գործընթացին նպաստող այլ փաստաթղթեր /ՄԿԾ-ով նախատեսվող կոմպետենցիաների և կրթաբաղադրիչների համապատասխանեցման մատրիցա և այլն/: ՄԿԾ-ների մշակման ուղղությամբ բուհն իրականացրել է պիլոտային ծրագիր /Սոցիալական մանկավարժություն, OSI, գրանտ N 16532/, որից ձեռքբերված դրական փորձը նպաստել է մյուս ՄԿԾ-ների մշակմանը:

ՄԿԾ-ները համահունչ են բուհի առաքելությանը: ՄԿԾ-ների թյունինգ-մեթոդաբանությամբ մշակումից առաջ անցկացվել է աշխատաշուկայի հետազոտություններ, այլ բուհերի նմանատիպ ծրագրերի բենչմարքինգ: ՄԿԾ-ները մշակվել են դուբլինյան նկարագրիչների, ՀՀ պետական կրթական չափորոշիչների (առկայության դեպքում), ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի հիման վրա: ՄԿԾ-ներում մանրամասն նկարագրված են ակնկալվող ուսումնառության արդյունքները: Բուհում ՄԿԾ-ների մասնագրի հիման վրա մշակվել են դասընթացների առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ (ԱՈՒՓ): Մշակվել են ՄԿԾ-ների տեղեկագրքեր:

3.2 Հետևելով «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարությանը» և «Առարկայան նկարագրի մշակման ռազմավարությանը» բուհը վարում է հստակ քաղաքականություն՝ դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան: ՄԿԾ-ների վերջարդյունքերի և դասավանդման, ուսումնառության մեթոդների համապատասխանեցման համար մշակված են հատուկ մատրիցաներ:

2014թ. իրականացվել է ՎՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցում. հարցվածների 60-70%-ը դասավանդման որակից բավարարվածությունը գնահատել է 7 միավորից բարձր (10 միավորանոց սանդղակով), իսկ մեթոդներից՝ 61%-ը: Հարցումները ցույց են տվել, որ դեռևս կան խնդիրներ գործնական, հատկապես լաբորատոր աշխատանքների ժամաքանակի, փորձերի թվի մեծացման, լաբորատորիաների վերազինման հարցերում: Բուհի շենքային պայմանները և ռեսուրսային բազան միշտ չէ, որ հնարավորություն են ստեղծում ՄԿԾ-ներում նկարագրված դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառման համար: Ինքնավերլուծության մեջ նշված են բուհի թույլ կողմերը, նախատեսվում են քայլեր թերությունների վերացման ուղղությամբ: Այժմ մշակվում է դասավանդման արդիական մեթոդների բանկ, որը կնպաստի դասավանդման և ուսումնառության մեթոդների կատարելագործմանը: Այն որպես ուղեցույց կտրամադրվի համալսարանի բոլոր ամբիոններին:

Բուհի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցման համակարգի ներդրմանը:

3.3 Բուհի ուսանողների գնահատման քաղաքականությունը ներկայացված է մի շարք կանոնակարգերում. «Կանոնակարգ ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման», կուրսային աշխատանքների, մանկավարժական պրակտիկայի, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման, կատարման և գնահատման կանոնակարգերը: Մշակվել են գնահատմանը վերաբերող մի շարք մեթոդական ուղեցույցներ /արտալսարանային ինքնուրույն աշխատանքի գնահատման, ռեֆերատների գնահատման և այլն/: «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարության» համաձայն ՎՊՀ-ում ընթանում է ուսանողների գնահատման համակարգի վերանայման գործընթաց: Փաստաթղթով պահանջվում է, որ ՄԿԾ-ներում նշվեն կոմպետենցիաների գնահատման մեթոդները, ձևերը, տեխնոլոգիաները և չափանիշները: Բուհի կողմից կիրառվող գնահատման բազմագործոնային համակարգում կիրառվում է 100 միավորանոց սանդղակ, որը ձևավորվում է մի շարք բաղադրիչներից: Բուհի վարած քաղաքականության նպատակն է՝ իրականացնել գնահատում նախատեսվող վերջնարդյունքների համաձայն և ակադեմիական ազնվության պահպանմամբ:

Նոր կազմված ուսումնամեթոդական փաթեթներում յուրաքանչյուր վերջարդյունքի դիմաց նշված են գնահատման համակարգը և մեթոդները :

Գնահատման քաղաքականությունը ներքին շահակիցներին ավելի հասանելի դարձնելու համար մշակվել է «Ուսանողի գնահատման ուղեցույց»: 2015թ. հաստատված գիտելիքների գնահատման կարգով ավելի է կարևորվել ուսանողի մասնակցությունը գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներին: Կարևորվել է նաև հետադարձ կապի ապահովման համար ավելի լայնորեն կիրառել ձևավորող գնահատումը:

Ակադեմիական ազնվությունն ապահովելու համար ձեռնարկվում են որոշակի քայլեր. մշակվել է ակադեմիական ազնվության ապահովման կարգ, գրավոր քննություններն անցկացվում են նախապես կնքված տետրերում, անցկացվում է համակարգչային թեստավորում: Ակադեմիական ազնվության ապահովման ուղղությամբ բուհի կատարած բարեփոխումները դեռևս այդքան էլ արդյունավետ չեն: Բուհն պատրաստվում է այդ ուղղությամբ նոր մեխանիզմներ ստեղծել:

3.4 Բուհում մշակված «Բենչմարքինգի իրականացման ռազմավարության» հիման վրա բուհը ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ է անցկացրել ՀՀ և արտասահմանյան մի շարք բուհերի հետ: Բուհում մշակվել է ՄԿԾ-ների ըստ կոմպետենցիաների, դասավանդման և ուսումնառության մեթոդների համեմատական վերլուծության ձևաչափ: Մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակային առումով այլ ծրագրերի հետ համահունչության ապահովմանը նպաստում է ՎՊՀ-ի ներգրավվածությունը ERASMUS MUNDUS ծրագրի EMINENCE և IANUS նախագծերում: Ուսանողների ընդգրկվածությունը շարժունության ծրագրերում՝ ՄԿԾ-ների համահունչությունը ստուգելու միջոց է /2015թ. հունվարի 1-ի տվյալներով արտասահմանյան բուհերում սովորում էր ՎՊՀ 26 ուսանող, 2015-16 ուստարում կսովորի 7 ուսանող/: Շարժունության ծրագրով սովորող ուսանողների հարցումները լրացուցիչ աղբյուր են հանդիսանում ՄԿԾ-ների համահունչությունը ստուգելու համար:

Ծրագրերի համահունչությունը ապահովվում է նաև շնորհիվ բուհի մասնակցությանը TEMPUS ծրագրի շրջանակներում MAHATMA նախագծին, որի շրջանակում մի քանի եվրոպական բուհերի հետ ներդրվել է «Կրթության կառավարում» մասնագիտությունը:

Թեպետ ըստ բուհի հետազոտությունների ՄԿԾ-երը բովանդակային առումով համահունչ են այլ նմանատիպ ծրագրերին, ՎՊՀ ուսանողության շարժունության մակարդակը դեռևս ցածր է:

3.5 ՎՊՀ-ում ձևավորված ավանդույթի համաձայն ՄԿԾ-ները պարբերաբար քննարկվել են ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհուրդներում կամ ռեկտորատի նիստերում: ՎՊՀ-ն նոր մշակվող քաղաքականությունն է՝ առկա բոլոր մասնագիտությունների գծով անցկացնել կրթական ծրագրերի գնահատում, որակի ապահովման գործընթացում հնարավոր խոչընդոտների կանխատեսում, բարելավման առաջարկների մշակում, անհրաժեշտ խորհրդտվության տրամադրում: 2014 թ. իրականացվել են ՄԿԾ-ների աուդիտի անցկացման պիլոտային ծրագրեր /«Ռուսաց լեզու և գրականություն», «Դեղագործական քիմիա»/: Մշտադիտարկման խմբերում ներառնվել են նաև ուսանողներ: 2015 թ. բուհում մշակվել և հաստատվել են մշտադիտարկման և աուդիտի անցկացման կարգեր: Նախատեսվում է ՄԿԾ-ների աուդիտն անցկացնել բակալավրիատում՝ 4 տարին մեկ, մագիստրատուրայում՝ 2 տարին մեկ անգամ:

ՄԿԾ-ների արդյունավետությունը պարզելու համար ներքին և արտաքին շահակիցների

մասնակցությամբ անցկացվել են կլոր սեղաններ, ֆոկուս-խմբեր, որակական և քանակական հարցումներ: Սակայն ՄԿԾ արդյունավետության գնահատման համար խիստ կարևոր շրջանավարտների հարցումները կանոնավոր բնույթ մինչ այժմ չեն կրել շրջանավարտների բազայի բացակայության պատճառով:

Վերոնշյալ բոլոր մեխանիզմներից հատկապես հաճախ է կիրառվում ուսանողության, դասախոսների և տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների հարցումը: Մյուս մեխանիզմները դեռևս ներդրման փուլում են և հստակ պարբերականությամբ չեն գործում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների ուսումնասիրության արդյունքում եկավ եզրակացության, որ դրանք հիմնականում համապատասխանում են հաստատության առաքելությանը, պետական կրթական չափորոշիչների առկայության դեպքում՝ մշակվել են դրանց հենքի վրա: ՄԿԾ-ները մշակելիս բուհի քաղաքականությունն է եղել՝ համապատասխանեցնել դրանք մարզի աշխատաշուկայի պահանջներին: Նպատակ է դրված եղել նաև՝ համապատասխանեցնել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման մեթոդները ծրագրերի մանրամասն նկարագրված ակնկալվող արդյունքներին: Ըստ փորձագետների դրական է, որ անցումային շրջանը դյուրացնելու համար բուհում մշակվել են համապատասխան կանոնակարգեր, ՄԿԾ-ների մշակման ընթացակարգերի և քայլերի մանրամասն նկարագրությամբ, ուսումնամեթոդական ուղեցույցներ, մատրիցաներ: Մշակված ուսումնամեթոդական փաթեթների տեխնոլոգիական քարտեզներում կոմպետենցիաների համապատասխան ներկայացված են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները: Արդյունքում դասավանդման և ուսումնառության մեթոդները բազմազան են և շատ հարուստ: Նախատեսվում է ստեղծել դասավանդման արդիական մեթոդների բանկ: Դասախոսները նոր մեթոդներին տիրապետելու համար վերապատրաստվում են: Շատ գործընթացներ դեռևս փորձարկման փուլում են կամ նոր են ծավալվել: Օրինակ, ծրագրերը մշակելիս և ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, սակայն դրանց արդյունավետությունը կարելի է գնահատել միայն առաջին շրջանավարտներն ունենալուց հետո:

Գնահատման համակարգում ևս փոփոխություններ են արվել, այն դարձել է բազմագործոնային, սակայն գնահատումը դեռևս ամբողջապես չի կատարվում ըստ վերջնարդյունքերի: Բուհը դեռևս լուրջ պրոբլեմներ ունի ակադեմիական ազնվության ապահովման գործում, բայց դա չի նշանակում, որ փորձագետները ականատես են եղել անազնիվության դրսևորման դեպքերի: Ուղղակի այդ մասին են վկայում թե ինքնավերլուծության, թե դասախոսների և ուսանողների հետ հանդիպման ընթացքում ստացված տեղեկությունները: Ֆակուլտետները և ամբիոնները շատ լուրջ են վերաբերում ակադեմիական ազնվության խնդրին, սակայն համալսարանը պետք է ապահովի, որ այս գործընթացը կիրառվի բոլոր ֆակուլտետների և ծրագրերի առկա ու հեռակա ուսանողների համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն, որ ուսանողների շարժունությունը խրախուսելու համար բուհը ՄԿԾ-ները համեմատել է այլ նմանատիպ ծրագրերի հետ: Սակայն պետք է նշել, որ համեմատությունը հաճախ մեխանիկական բնույթ է կրել և համեմատության համար ընտրված բուհերի ծրագրերը միշտ չէ, որ ճանաչում ունեն: Այդ դեպքում համեմատությունը ինքնանպատակ է դառնել և իրականում ՄԿԾ-ների բարելավման տեսանկյունից քիչ բան է տվել:

Բուհի նպատակների և խնդիրների հստակեցմանը, ՄԿԾ-ների մշակման մեթոդաբանության ընտրությանը, նորարական մոտեցումների մշակմանը մեծապես նպաստել է բուհի և նրա աշխատակիցների ներգրվածությունը մի շարք դրամաշնորհային ծրագրերին:

Ընդհանուր առմամբ, ծրագրերն արդիականացման փուլում են, մասնավորապես, մշակվում են ուսանողների պահանջների ավելի թափանցիկ և ուսանողակենտրոն մոտեցման ներդրման հնարավորություններ:

Դրական է նաև, այն, որ ՄԿԾ-ների մշակման և ներդրման քաղաքականությունը իրագործելու և բարելավելու համար մշակվել եմ մշտադիտարկման և աուդիտի մեխանիզմներ:

Փորձագետները մտահոգություն ունեն, որ պլանավորածի լիարժեք իրագործմանը կարող է խոչընդոտել բուհի ֆինասական և նյութական միջոցների սղությունը:

Փորձագիտական խումբը ափսոսանքով է նշում, որ թեպետ ՄԿԾ-երը բովանդակային առումով բարելավվել են, սակայն օտար լեզուների չիմացությունը խոչընդոտ է հանդիսանում շարժունության և միջազգայնացման համար: Հավանաբար խնդիրը ոչ միայն ուսումնական պլաններում օտար լեզուների ոչ բավարար ժամաքանակն է, այլև դասավանդման ավանդական մեթոդիկան:

Անհրաժեշտ է նշել, որ բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմը հստակ պատկերացնում է բացթողումներն ու թերությունները: Պատահական չէ, որ չափանիշի SWOT վերլուծության բաժնում ինքնավերլուծություն կատարող խումբը հստակ գրել է բուհի նախատեսվող քայլերը չափանիշի արդյունավետության ապահովման ուղղությամբ, հետևապես թույլ կողմերի գնահատմամբ արդեն ունի իր մարտավարությունը, որը ճիշտ կառավարման դեպքում կարող է բերել դրական արդյունքների:

Եզրահանգում. Փորձագիտական խումբը չափանիշ 3-ը գնահատում է, բավարար, քանի որ բուհի ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը: Ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը նպաստելու համար ըստ կոմպետենցիաների ներդրվում են դասավանդման, ուսումնառության, գնահատման ինովացիոն մեթոդներ: Ավելի մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների հմտությունների և կարողությունների ձևավորմանը: Բուհը ներդրում է այնպիսի մեխանիզմներ, որոնք կարող են ապահովել ՄԿԾ-ների համահունչությունը նմանատիպ այլ ծրագրերի հետ: Բուհը հիմնականում իրականացնում է պլանավորած քաղաքականությունը: Իրականացման արդյունավետությունը ստուգելու համար մշակվել են գնահատման մեխանիմներ, որոնք փորձարկվել են և այժմ ներդրման փուլում են:

Եզրակացություն. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՎՊՀ-ում ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմները հստակ են: Բակալավրիատի առկա ուսուցման ձևով ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության հաստատած ընդունելության կարգով, իսկ հեռակա ուսուցման ձևով՝ ԿԳՆ

հրամանով հաստատված ընդունելության կանոնների համաձայն: Մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է բուհում սահմանված կարգով:

Չնայած ուսանողների հավաքագրման ուղղությամբ արվող քայլերին ՎՊՀ ուսանողների թիվն առկա ուսուցման բակալավրիատում 2015 թ.-ին՝ 2011 թ. համեմատությամբ, կրճատվել է մոտ 2 անգամ: 2010-2014 թվականներին ուսանողների ընդունելությունը նվազել է նաև հեռակա ուսուցման համակարգում: Վերջին տարիներին նկատվում է առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման համակարգ ուսանողների ներհոսք: Բուհի ղեկավարության կարծիքով պատճառը հեռակա համակարգի ուսման վարձի մատչելիությունն է, հեռակա համակարգի ուսանողների աշխատելու հնարավորությունը, գյուղերից և Վանաձորից հեռու գտնվող քաղաքներից եկող ուսանողների համար ավելի քիչ ճանապարհատրանսպորտային խնդիրներն ու ավելի պակաս ծախսերը: Բուհն իր ինքնավերլուծության մեջ նշում է ուսանողության թվաքանակի նվազման այլ պատճառներ, որոնցից են՝ ՀՀ-ում դիմորդների թվի նվազումը, մայրաքաղաքի բուհերի գրավչությունը և տարածաշրջանի ոչ պետական ՄՈՒՀ-երի համեմատաբար ցածր վարձավճարների գրավչությունը:

Դիմորդների թվաքանակի մեծացման նպատակով բուհը նվազեցրել է մագիստրոսական կրթական ծրագրի մուտքային շեմերը, ինչը կարող է հանգեցնել կրթության որակի անկման:

Բակալավրիատում դիմորդների թիվը մեծացնելու համար մշակվել են հետևյալ մեխանիզմները. ապահովվում է բուհ-դպրոց կապը, բուհում կազմակերպում են դպրոցականների օլիմպիադաներ: «Ֆակուլտետային օրեր» միջոցառումների ընթացքում աշակերտներին ծանոթացնում են բուհի պայմաններին, անցկացվում են բաց դասեր, կատարվում են լաբորատոր ցուցադրումներ, մարզի այլ քաղաքներում կազմակերպվում են տեղեկատվական արշավներ: Դիմորդներին տեղեկատվություն է տրամադրվում ՎՊՀ կայքի միջոցով: Ընդունելությանը նախապատրաստելու նպատակով քննական առարկաներից ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպվում են նախապատրաստական անվճար դասընթացներ, որոնց վարմանը ներգրավվում են նաև մագիստրատուրայի լավագույն ուսանողները:

Այսպիսով բուհը ստեղծել է ուսանողների հավաքագրման բազմազան մեխանիզմներ, սակայն չի իրականացնում այդ մեխանիզմների արդյունավետության գնահատում:

4.2 Վերջին տարիներին բուհը մեխանիզմներ է ստեղծել ուսանողների կրթական կարիքների վերհանման համար: Ուսանողների կարիքների վերհանմանը նպաստում է բուհում ներդրված ակադեմիական խորհրդատուների հաստատությունը, որի գործունեությունը կարգավորվում է հատուկ կանոնակարգով: Ուսանողները հնարավորություն ունեն բարձրացնել իրենց հուզող հարցերը ռեկտորի և դեկանների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումների ընթացքում: Դրան նպաստում է նաև կայքի «Հարց-պատասխան» բաժինը, որից ավելի շատ օգտվում են հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողները: Բուհի կրթական կարիքների վերհանմանը նպաստում են ՈԱԿ-ի անցկացված հարցումները և ուսանողների առաջարկությունների ուսումնասիրությունը: 2013թ. հարցման ընթացքում ուսանողների 30%-ը հանդես է եկել առաջարկներով: Սակայն հարցումներում հեռակա ուսուցման ուսանողները չեն ներգրավվում:

Ուսանողների կարիքների վերհանման հարցում կարևոր դեր ունի բուհի ուսխորհուրդը: Ուսանողները ներգրավված են բուհի կառավարման մարմիններում /25%/, տարբեր խորհուրդներում: Թեպետ, ինչպես ցույց տվեցին փորձագետների ուսումնասիրությունները

/գիտխորհրդի նիստերի արձանագրությունների դիտում, ուսանողների հետ ֆոկուս խմբեր/, ֆորմալ կառույցներում ուսանողների ակտիվությունը բարձր չէ:

Թեպետ բուհում ներդրվել են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, դրանք միշտ չէ, որ բավարարվում են: Այսպես, օրինակ, բուհը բացահայտել է, սակայն դեռևս չի կարողանում անհրաժեշտ պայմաններ ստեղծել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

4.3 Բուհի մի քանի կանոնակարգերում ներառված են լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ դրույթներ /«Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման», «Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման» կարգերում, ինչպես նաև ակադեմիական խորհրդատուների աշխատանքը կարգավորող կարգում/:

Խորհրդատվություններ տրամադրելու նպատակով համալսարանում ստեղծվել է Ակադեմիական խորհրդատուների ինստիտուտ: Ակադեմիական խորհրդատուների կողմից ուղղորդում ստանալու համար հատուկ ժամ է ամրագրված առկա ուսուցմամբ դասացուցակներում / շաբաթական մեկ ժամ և ներառվում է դասախոսի բեռնվածության մեջ/: Յուրաքանչյուր 15 ուսանողին կցված է մեկ խորհրդատու:

Կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ ցածր ակադեմիական առաջադիմություն ունեցող ուսանողների համար:

Լրացուցիչ պարապմունքներին մասնակցելու և խորհրդատվություն ստանալու հնարավորության մասին ուսանողները տեղեկացվում են դեկանների, ակադեմիական խորհրդատուների և առաջին կուրսեցիներրին տրամադրվող «Ուսանողի ուղեցույց»-ի միջոցով: Հեռակայի ուսանողներին բուհը ինֆորմացիա է տրամադրում էլեկտրոնային կրիչներով:

Ամբիոնները կազմակերպում են անհատական պարապմունքներ, ունեն ամենօրյա խորհրդատվության համար հաստատված ժամանակացույց:

2009 թվականի համեմատությամբ ուսանողների անհատական/ինքնուրույն աշխատանքների կազմակերպման համար տրամադրված ընդհանուր ժամաքանակը դասախոսի ծանրաբեռնվածության մեջ 6 % -ից 2014 թվականին հասցվել է 20 %-ի:

Ուսանողների լրացուցիչ պարապմունքների մեջ է մտնում նաև Լեզուների կենտրոնի մատուցած ծառայությունները, որոնցից տարեկան օգտվում են մոտ 70 ուսանողներ, ինչը՝ համեմատած ՄՈՒՀ-ի ուսանողների ընդհանուր թվի հետ, դեռևս բարձր ցուցանիշ չէ:

Ուսանողների հավաստմամբ բոլոր դասախոսները հասանելի են և պատրաստակամ խորհրդատվություն ապահովելու համար: Բարձր առաջադիմությամբ ուսանողներն անհրաժեշտության դեպքում նույնպես կարողանում են անհատական խորհրդատվություն ստանալ:

2014թ. կատարված հարցման տվյալներով խոհրդատուների աշխատանքը ուսանողների կողմից արդյունավետ է համարել 53%-ով, դասախոսների կատարած արտալսարանային աշխատանքը ուսանողների հետ՝ 54%-ով, ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման գործում դասախոսից ստացած օգնությունը՝ 67%-ով: Հարցման արդյունքների խորքային վերլուծությունը բացակայում է, պարզ չէ, թե որոնք են աշխատանքների ոչ արդյունավետ գնահատման պատճառները:

Ստեղծված համակարգի թերություններից է այն, որ հեռակա ուսուցմամբ ուսանողները ներգրավված չեն դրանում: Թեպետ հեռակայի ուսանողները նույնպես տեղեկացված են այդ ծառայությունների վերաբերյալ և ցանկության դեպքում կարող են ստանալ, սակայն հստակ մեխանիզմներ դրա համար ստեղծված չեն:

4.4 Բուհում օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հատուկ կանոնակարգ և ժամանակացույց չկա, սակայն ուսանող-դեկանատ կապը անկաշկանդ է, և ցանկության դեպքում ուսանողները օժանդակություն կարող են ստանալ: Բուհում ուսանողներին օժանդակելու համար ստեղծվել են իրավաբանական և հոգեբանական ծառայություններ մատուցելու կենտրոններ:

Բուհում կան վարչական աշխատակազմին դիմելու նաև այլ մեխանիզմներ: Օրինակ, «Ուսանողի ուղեցույցի», ՄՈՒՀ-ի կայքի միջոցով ուսանողին տրամադրվում են ստորաբաժանումների հեռախոսահամարները և վարչակազմի էլեկտրոնային փոստի հասցեները: Այս մեխանիզմներից հիմնականում օգտվում են հեռակայի ուսանողները:

Ուսանող-վարչակազմ հարաբերությունների կայացման գործում որոշակի դեր ունի Ուսխորհրդը, որը բուհի ղեկավարությանը ներկայացնում է ուսանողների կողմից բարձրացվող խնդիրները:

4.5 Բուհում 2009 թ. ստեղծվել է կարիերայի և հեռահար կրթության կենտրոն, որն այժմ վերանվանվել է «Շրջանավարտների և Կարիերայի աջակցման կենտրոն»: Կենտրոնն իրականացրել է մի շարք հետազոտություններ՝ աշխատաշուկայի, գործատու-բուհ կապի արդյունավետության, շրջանավարտների բավարարվածության, բուհի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ:

Կենտրոնը կազմակերպում է աշխատաշուկա մուտք գործելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանն ուղղված սեմինարներ ուսանողների համար, փորձում է կապ հաստատել գործատուների հետ:

Կարիերայի կենտրոնը համագործակցում է ՎԻՎԱ-ՍԵԼ ՍՏՍ ընկերության հետ, ինչի արդյունքում ՎՊՀ չորս տասնյակից ավելի ուսանողների ուսման վարձն ամբողջությամբ փոխհատուցում է ընկերությունը: Համագործակցության շրջանակներում մի շարք ուսանողներ և դասախոսներ մասնակցել են վերապատրաստումների, ամառային դպրոցների, ինչպես նաև անցել են աշխատանքային պրակտիկա կազմակերպության տարբեր բաժիններում: Կենտրոնը համագործակցում է նաև Լոռու մարզի զբաղվածության կենտրոնի հետ: Ցածր մոտիվացիայի պատճառով մարզի այլ գործատուների հետ համագործակցությունը արդյունավետ չէ:

Դեռևս արդյունավետ չէ շրջանավարտների հետ տարվող աշխատանքը՝ զգացվում է մարդկային ռեսուրսների պակասը՝ կենտրոնն ունի մեկ հաստիք, ինչը բավարար չէ մեծածավալ աշխատանք կազմակերպելու համար: Կենտրոնի աշխատանքը շրջանավարտների հետ կարող է դյուրացնել նոր ներդրվող էլեկտրոնային ռեգիստրը, որտեղ ներառված են վերջին տարիների շրջանավարտների և ուսանողների տվյալները:

Կարիերայի կենտրոնը պլանավորել է ստեղծել շրջանավարտների տեղեկատվական և ռեցյումեների համակարգչային բազա, ինչը կնպաստի հետադարձ կապի ապահովման արդյունավետությանը:

4.6 Բուհում ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու նպատակով ստեղծվել է ուսանողական գիտական ընկերություն, որի գործունեությունը

կանոնակարգվում է հաստատված «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրությամբ»:

Բուհում մշակված չեն ուսանողների գիտահետազոտական աշխատանքների մեջ ներգրավելու մեխանիզմներ: ՈւԳԸ աշխատանքը դեռևս արդյունավետ չէ: Դրա պատճառներից մեկն այն է, որ ամբիոնները չունեն հետազոտությունների համար հաստատված գերակա ուղղություններ:

Ուսանողները զեկուցումներ են ունենում բուհում կազմակերպվող հանրապետական և միջբուհական ուսանողական գիտական կոնֆերանսներին:

Ստեղծվել է գիտահետազոտական համալիր լաբորատորիա, որը բնագիտական մասնագիտությունների մագիստրատուրայի ուսանողներին հնարավորություն է տալիս կատարել փորձեր նոր սարքերի միջոցով:

Այսպիսով, բուհի ուսանողությունը հետազոտական աշխատանքում լայնորեն ներգրավված չէ: Բուհի ուսանողների տպագրված աշխատանքները խիստ փոքրաքանակ են: Չկան ուսանողի և դասախոսի համատեղ գիտական աշխատանքներ և տպագրված գիտական հոդվածներ: Մագիստրատուրայում բուն հետազոտությունը ուսանողը հաստատված կարգի համաձայն անում է միայն վերջին կուրսում:

4.7 Ուսանողների իրավունքները և դրանց լուծման ուղիները ներկայացված են բուհի մի շարք կանոնակարգերում. Ուսանողական խորհրդի կանոնադրությամբ, Ներքին կարգապահական կանոններով, ուսանողների կողմից առաջարկություններ, դիմում-բողոքներ ներկայացնելու և դրանք քննարկելու կարգով:

Ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին է Ուսանողական խորհուրդը: ՎՊՀ ուսխորհրդի կազմում ընդգրկված է բուհի ուսանողների 10%-ը: Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողները Ուսխորհրդի աշխատանքներին որպես կանոն չեն մասնակցում: Ուսխորհրդում կա ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողով: Բուհը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերում Ուսխորհրդի աշխատանքների կազմակերպման համար, սակայն այդ գումարները հիմնականում օգտագործվում են ուսանողական մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպման նպատակով:

Իրավունքների ոտնահարման դեպքում ուսանողները կարող են դիմել ակադեմիական խորհրդատուներին: Քանի որ ռեկտորի հետ հանդիպումները կրում են պարբերական բնույթ, ուսանողների հավստմամբ նրանք անմիջականորեն դիմում են նաև ռեկտորին:

Քննական շրջանում ծագած կոնֆլիկտների դեպքում ուսանողները կարող են դիմել քննությունները վերահսկող հանձնաժողովին:

2013թ. բուհում ստեղծվել է Իրավաբանական խորհրդատվական կենտրոն, որը աշխատանքներ է տանում բուհում իրավական մշակույթի զարգացման, իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ:

Փաստորեն կան որոշակի մեխանիզմներ, որոնք ուղղված են ուսանողների իրավունքների պաշտպանությանը, սակայն հատուկ իրավապաշտպան անկախ մարմին բուհում չկա:

4.8 Բուհում ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման հիմնական մեխանիզմ են հանդիսանում հարցումները: Հարցումների համար մշակվել է կրթական ծառայությունների, ուսումնաօժանդակ կազմի մատուցած ծառայությունների, ուսումնական ռեսուրսների, կոռուպցիոն ռիսկերի, ուսանողների բավարարվածության գնահատման գործիքակազմ: Պարբերաբար անցկացվում

է «Դասախոսը ուսանողների աչքերով» ուսանողական հարցում, ինչը կարգավորվում է հատուկ կանոնակարգով:

Հարցումները անցկացվում են որակի ապահովման կենտրոնի կողմից: Խրախուսելի է, որ հարցումների անցկացման գործում ՈԱԿ-ին օժանդակում են ուսանողները: Սակայն կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները դեռևս համակարգված չեն, ինչը նվազեցնում է դրանց արդյունավետությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն ունի ուսանողների հավաքագրման բազմաթիվ մեխանիզմներ, սակայն երբևիցե կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում չի անցկացրել: Բուհի վարչակազմի կարծիքով ուսանողների թվի նվազումը կապված է բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների, մարզի միգրացիայի բարձր ցուցանիշների, աղքատության մակարդակի հետ, սակայն հնարավոր է նաև, որ կիրառվող մեխանիզմների արդյունավետությունն է ցածր, և դրանք պետք է փոփոխել և ընտրել դիմորդների վրա ներազդելու ավելի ժամանակակից միջոցներ:

Փորձագետները համոզվեցին, որ ավելի արդյունավետ են գործում ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության մեխանիզմները: Բավականին հետաքրքիր է գործում բուհում ստեղծված ակադեմիական խորհրդատուների ինստիտուտը, որը նաև կառավարող մարմիններին ուսանողների կարիքների մասին տեղեկատվություն ապահովող միջոց է: Ծագած խնդիրներն ուսանողները կարող են քննարկել նաև դեկանների, ռեկտորի հետ կայուն պարբերականությամբ կազմակերպվող հանդիպումների ընթացքում: Ուսանողները ներգրավված են որոշում կայացնող մարմիններում, մասնակցում են ՈԱԿ-ի կողմից կազմակերպվող մոնիթորինգային խմբերին:

Փորձագետները դրական են համարում, որ ուսանողների հարցման հարցաթերթիկները կազմված են այնպես, որ ուսանողներին հնարավորություն են ընձեռում առաջարկություններ անելու համար և այդ առաջարկություններն ուսումնասիրվում են:

Փորձագիտական խումբը անընդունելի է համարում, որ պատշաճ ուշադրություն չի դարձվում հեռակայող ուսանողների կրթական կարիքներին: Ճիշտ է հեռակայող ուսանողների ֆոկուս խմբի ընթացքում նրանք չեն դժգոհել իրենց կարգավիճակից, սակայն, երբ փորձագետները համեմատում են առկայի և հեռակայի ուսանողներին ընձեռած հնարավորությունները, երևում է, որ դրանց մեջ մեծ տարբերություններ կան:

Վերջին տարիներին ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրությունը հանգեցրել է ՄԿԾ-ների փոփոխմանը, նրանցում գործնական, լաբորատոր ժամերի ավելացմանը, դասավանդման և ուսումնառության մեթոդների կատարելագործմանը: Բուհի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողներն ընդգծեցին, որ իրենց ուսումնառության տարիների ընթացքում բուհում կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ դրական փոփոխություններ կան: Սակայն կան մասնագիտություններ, որոնք ավելի մեծ ֆինանսական ներդրումների կարիք ունեն: Օրինակ, կենսաբանական գիտություններ ուսումնասիրող ուսանողներն նյութատեխնիկական ռեսուրսների սակավության հետ կապված խնդիրներ ունեն:

Ուսանողների իրավունքների պաշտպանության հատուկ մարմին բուհում չկա: Ուսանողների իրավունքերի պաշտպանության հարցով, ըստ բուհի կանոնակարգերի, զբաղվում է Ուսանողական խորհուրդը, սակայն նրա իրավապաշտպան գործունեությունը զիջում է մշակութային, սպորտային և ազատ ժամանցի կազմակերպմանն ուղղված

գործունեությունը: Փորձագետները մտահոգություն են հայտնում նաև հեռակայող ուսանողների ՈՒԽ-ի աշխատանքներին չմասնակցելու համար:

Թեպետ ուսանողների և Ուսխորհրդի հետ հանդիպման ընթացքում նրանք ընդգծեցին, որ իրավունքների պաշտպանության խնդիրներ չունեն, փորձագետների կարծիքով ուսանողների իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ մեխանիզմները հուսալի չեն: Ողղակի բուհն այսօր ուսանողների քանակական համակազմը ապահովելու խնդրից ելնելով վարում է նրանց սիրաշահելու քաղաքականություն: Սակայն միևնույն ժամանակ փորձագետները գտնում են, որ ստեղծված մեխանիզմները /ակադեմիական խորհրդատուների միջամտությունը, ռեկտորի և դեկանների հետ հանդիպումները/ հնարավորություն են տալիս լուծել ծագող կոնֆլիկտները: Իդեպ, հեռակայող ուսանողները այդ հնարավորություններից նույնպես չեն օգտվում: Ինքնավերլուծության համաձայն ուսանողների միայն 15 տոկոսն է բավարարված իրավունքների պաշտպանության գործընթացներից: Հետևապես հարցը լրացուցիչ քննարկման և հետազոտության կարիք ունի:

Հեռանկարային առումով լավ միջոց կարող են լինել Իրավաբանական խորհրդատվական կենտրոնի կողմից՝ իրավական իրազեկվածության բարձրացման, իրավագիտակցության զարգացման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքները:

Փորձագետների կարծիքով վարչական մարմինները ուսանողության համար հասանելի են, և հարկ եղած դեպքում ուսանողները կարող են դիմել նրանց:

Փորձագետներն ընդունում են, որ կարիերայի հարցում ուսանողներին ծառայություններ մատուցելու ուղղությամբ բուհում աշխատանք են տարվում, սակայն ծառայությունը դեռ արդյունավետ չի գործում, քանի որ կա մարդկային ռեսուրսների պակաս: Կարիերայի կենտրոնի կողմից ուսանողներին աշխատանքի տեղավորման ուղղությամբ «հաջողության պատմությունները» քիչ են, այդ պատճառով ուսանողների շրջանում կենտրոնի նկատմամբ վստահության մշակույթ չի ձևավորվել, բուհը չի կարողանում պատշաճ մոտիվացիա ստեղծել գործատուների մոտ: Շրջանավարտների հետ հետադարձ կապի ուղղությամբ աշխատանքները դեռևս սկզբնավորման փուլում են:

Փորձագետների կարծիքով՝ ուսանողության ընդգրկումը հետազոտության մեջ համակարգված չէ: Այս ոլորտում բուհը դեռևս բավականին մեծ անելիքներ ունի:

Բուհն ունի ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ, սակայն դրանք համակարգված չեն, գտնվում են լրամշակման փուլում:

Եզրահանգում. Բուհն ուսանողներին հնարավորինս տրամադրում է աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով, սակայն արդյունավետության գնահատման մեխանիզմները դեռ հղկման կարիք ունեն: Չնայած առկա թերություններին՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը համապատասխանում է չափանիշի պահանջներին, քանի որ պահպանված են ուսանողների իրավունքների պաշտպանվածության, որոշումների կայացման գործընթացներում ներգրավվածության, առողջ միջավայրի ապահովման, ուսանողների ուղղորդման և օժանդակության հիմնական սկզբունքները:

Եզրակացություն. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՎՊՀ 2014-2018թթ. զարգացման հայեցակարգի համաձայն պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունն է՝ կրթական ծրագրերն իրականացնելու համար աշխատանքի ընդունել համապատասխան որակավորումներ ունեցող մասնագետների: Քաղաքականությունն իրագործելու համար բուհում մշակվել են մի շարք կարգեր: Հաստատված են պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգը, տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները, հաստատվել է աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը, պատվավոր կոչումներ սահմանելու և դրանք շնորհելու մասին կարգը /կարգերի մի մասը հաստատվել են բուհի մանկավարժական ինստիտուտ եղած ժամանակ և դեռևս չեն վերանայվել/: Նշված կարգերի համաձայն պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է մրցույթով, աշխատանքի հրավիրվողներով և ժամավճարային հիմունքներով՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքին, աշխատանքային պայմանագրին, ՎՊՀ-ի կանոնադրությանը համաձայն: ՎՊՀ գիտխորհրդին կից ստեղծված է մրցութային հանձնաժողով, որը գործում է ըստ հաստատված կանոնակարգի և որի խնդիրն է ապահովել կադրերի ընտրության օրինականությունը: Պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը. դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր:

Պարբերաբար բուհն անում է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի վերլուծություն և գնահատում: 2015 թ. տվալներով բուհի դասախոսների 78%-ն ունի գիտական աստիճան և կոչում, համալսարանում աշխատում է 11 պրոֆեսոր, 118 դոցենտ, ՀՀ ԳԱԱ 1 թղթակից անդամ:

Կրթական ծրագրերի իրականացման համար բուհի ներուժը հիմնականում բավարար է: Բուհն անհրաժեշտության դեպքում հրավիրում է նաև համատեղությամբ աշխատողներ:

5.2 Ուսումնական հաստատության «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարության» մեջ նշվում է, որ ՄԿԾ-ներում պետք է ներկայացված լինեն նաև անհրաժեշտ մարդկային ռեսուրսները, սակայն հաստատված ՄԿԾ-երի մասնագրերում հատուկ պահանջներ ՊԴ կազմի կոմպետենցիաների նկատմամբ ներկայացված չեն:

ՎՊՀ դասախոսական կազմը համալրվում է հայտարարված մրցույթով: Դասավանդող մասնագետների հենքային կրթությունը համապատասխանում է դասավանդվող դասընթացների ուղղվածությանը: Աշխատանքի ընդունելիս հաշվի է առնվում

մասնագիտական որակների համապատասխանությունը մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին: Առավելությունը տրվում է այն կադրերին, որոնք զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական աշխատանքով:

Հատուկ մասնագիտական դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, ունեն գիտական աստիճան (կամ գիտական կոչում, արվեստի ոլորտի պատվավոր կոչում և այլն) և/կամ գործունեության համապատասխան ոլորտում աշխատանքային փորձ:

Փաստորեն ըստ ՄԿԾ-ների ՊԴ կազմին ներկայացվող պահանջները դեռ սահմանված չեն, սակայն ՎՊՀ որակի ապահովման համակարգի ներդրման և կատարելագործման 2014-2018թթ. ռազմավարության համաձայն նախատեսվել է. «Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ»:

5.3 Բուհում դասախոսական կազմի գնահատման գործընթացը սկիզբ է առել 2009թ. ՎՊՄԻ-ի «Դասախոսը ուսանողների աչքերով» արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգով: Կարգում նշված է հարցման պարբերականությունը և օգտագործման կարգը: «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցումն անցկացվում է ֆիքսված պարբերականությամբ, արդյունքները տեղակայվում են ներքին ցանցում, քննարկվում են գիտխորհրդում, համապատասխան ստորաբաժանումներում:

Կան նաև դասախոսների աշխատանքի գնահատման ավանդական մեթոդներ, օրինակ՝ դասալսումը, որը անցկացվում է «Ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգի» համաձայն:

Բուհը նախատեսել է դասախոսների վարկանիշային համակարգի մշակում և ներդրում, որի կարևոր ցուցիչներից է հետազոտական աշխատանքը:

ՎՊՀ յուրաքանչյուր դասախոս ամբիոն է ներկայացնում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթները: Տվյալ ուսումնական տարվա ավարտին յուրաքանչյուր դասախոսն ամբիոն է ներկայացնում հաշվետվություն: Հաշվետվությունների քննարկման միջոցով դարձյալ գնահատվում է դասախոսի աշխատանքը:

5.4 Բուհում դեռևս 2013թ. մշակվել է լրացուցիչ կրթության կանոնակարգ, որի նպատակն է ապահովել դասախոսների ընդհանրական, առարկայական և հետազոտական կարողությունների շարունակական զարգացումը: Դասախոսների կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման հնգամյա ծրագիրը կոորդինացնում է Լրացուցիչ կրթության բաժինը: Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական կառուցամասերից՝ կրթական և հետազոտական-մեթոդական: Հաստատված է դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույց:

Դասախոսները վերապատրաստվում են օտար լեզուների, համակարգչային գիտելիքների և իրավական իրազեկության բարձրացման ուղղությամբ:

2013-2015թթ. վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվող դասընթացներին ընդգրկվել են 201 դասավանդող, 20 ուսումնաօժանդակ աշխատող:

5.5 Բուհը չունի ՊԴ կազմի կայունությունն ապահովելու հստակ քաղաքականություն: Սակայն բուհը փորձում է ապահովել ՊԴ կազմով ապահովվածության կայունությունն և սերնդափոխությունն իր շրջանավարտների հաշվին: ՎՊՀ ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի

մոտ 70%-ը բուհի շրջանավարտներն են: Քանի որ Վանաձորում բուհերը շատ չեն, կադրերի հոսունությունը բարձր չէ: Նախատեսվում է ավելացնել ասպիրանտուրայում սովորող ուսանողների թիվը, որը կարող է հանդիսանալ ՊԴ կազմի համալրման հուսալի աղբյուր: ՎՊՀ-ն ունի ասպիրանտական 12 գիտաճյուղով կրթություն կազմակերպելու իրավունք:

Դրա հետ մեկտեղ կան նաև կայունությանը սպառնող վտանգներ: ՊԴ կազմի շուրջ 38,4%-ի տարիքն անցնում է 60-ից: Հատկապես դա վերաբերում է մաթեմատիկական բլոկին:

5.6 Բուհը չունի ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման մշակված քաղաքականություն, սակայն խրախուսում է ՊԴ կազմի կողմից կոչումների և գիտական աստիճանների ձեռքբերումը: ՊԴ կազմի առաջընթացն ապահովելու համար բուհը կազմակերպում է վերապատրաստումներ: Մասնագիտական առաջընթացն ապահովելու միջոց է հանդիսանում նաև դասախոսների ներկայացված գիտական հոդվածների անվճար հրատարակումը: Սակայն այդ ուղղությամբ կատարված աշխատանքը դեռ բավարար չէ աշխատակիցների հետազոտական կարողությունները զարգացնելու համար:

Կանոնակարգման փուլում է վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի վերապատրաստման և ատեստավորման հարցը: Բուհը նախատեսել է և աշխատանքներ է տանում դասախոսական կազմի խրախուսման քաղաքականության ու ընթացակարգերի մշակման ուղղությամբ /ըստ մասնագիտական, մանկավարժական վարպետության և այլ չափորոշիչների/: Դրա հետ մեկտեղ նկատվում է պրոֆեսորադասախոսական և վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական կազմի համար նախատեսված խրախուսման միջոցների սակավություն:

Բուհի մասնագիտական որակների զարգացման համար լավ հնարավորություն կարող են ստեղծել դրամաշնորհային ծրագրերը, սակայն դրա համար խոչընդոտ է հանդիսանում ՊԴ կազմի օտար լեզուների չիմացությունը: Դասախոսներին օժանդակելու համար բուհը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ, ստեղծել է լեզուների կենտրոն, որտեղ ուսուցումը կազմակերպվում է շատ ցածր վարձավճարով:

Մասնագիտական առաջընթացն ապահովելու համար բուհը նախատեսում է կիրառել նաև ֆինասական լծակներ՝ մշակման փուլում է դասախոսներին վարկանշային-տարբերակված աշխատավարձ վճարելու կանոնակարգը:

5.7 Բուհն իր ռազմավարական նպատակների իրականացման համար ապահովված է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմով: Վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական աշխատողները կազմում են բուհի աշխատակիցների 42%: Վերջին 3 տարում ուսումնաօժանդակ կազմը 71 աշխատողից կրճատվել է 49-ի, այժմ կազմում է 11%: Ավելի ուռճացած է թվում բուհի վարչական ապարատը /22%/, սակայն հնարավոր է, որ բուհի բարեփոխումների փուլում դա արդարացված է: Համակարգը կատարելագործելու համար բուհում մշակվում է վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի վերապատրաստման և ատեստավորման կարգ:

Դատողություններ. Անցումը համալսարական կրթությանը ստեղծում է կառավարման և աշխատանքի կազմակերպման ոլորտում կադրային քաղաքականության վերանայման և վերամշակման անհրաժեշտություն: Մինչդեռ բուհում դեռևս մեծ մասամբ պահպանվել են մանկավարժական ինստիտուտի մշակած կարգերը: Իհարկե հասկանալի է, որ համալսարան դառնալուց հետո քիչ ժամանակ է անցել, այժմ կանոնակարգերը վերանայման փուլում են:

ՎՊՀ-ն վարում է պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային և արտամրցութային կարգերով համալրելու քաղաքականություն: ՄԿԾ-ներում դեռևս չկան ՊԴ կազմին ներկայացվող հստակ պահանջներ, սակայն որակի ապահովման ռազմավարական պլանով դա նախատեսված է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՎՊՀ-ում անցկացվում են դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման միջոցառումներ: Այդ նպատակով մշակվել է հատուկ բալային համակարգ, որը հավանաբար կամբողջանա, երբ կներդրվի դասախոսների վարկանիշային համակարգը: Այժմ բուհում աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ, մշակվում է դասախոսներին վարկանշային-տարբերակված աշխատավարձ վճարելու կանոնակարգ:

Սակայն դասախոսների վերապատրաստման դասընթացները չեն կազմակերպվում վերհանված կարիքների հիման վրա, այլ կրում են պարտադիր բնույթ: Մոտիվացիայի պակասի և լսարանային ժամերով ծանրաբեռվածության պատճառով որակավորման բարձրացման դասընթացներին աշխատակազմը ոչ լիարժեք է մասնակցում, ինչը ազդում է արդյունավետության վրա:

Բուհի ֆինասական դժվարությունները կաշկանդում են ՊԴ կազմի մասնագիտական աճին աջակցելու ուղղությամբ արվող քայլերը: Լիարժեք չի օգտագործվում դասախոսների վերապատրաստմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի ռեսուրսը:

Բուհի ՊԴ կազմը աչքի է ընկնում բարձր կայունությամբ: Դրա հետ մեկտեղ որոշ մասնագիտությունների գծով սերնդափոխության ապահովման վտանգ կա, սակայն այդ հարցի լուծումը գտնվում է բուհի գերակայությունների թվում և, ինչպես նկատեցին փորձագետները, որպես կանոն, լուծվում բուհի լավագույն շրջանավարտներին բուհում աշխատանքի ընդունելու միջոցով: Վարչական աշխատողների և դասախոսների մի մասը հպարտությամբ են նշում, որ իրենք Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի շրջանավարտներ են:

Բուհը թեպետ խրախուսում է դասախոսների մասնագիտական աճը և վերջին տարիներին բավական աճել է գիտական կոչում և աստիճան ունեցող դասախոսների թիվը, սակայն առաքելության մեջ նախատեսված հետազոտության զարգացման համար դեռ բուհը չունի բավական ներուժ:

Փորձագետների կարծիքով բուհի վարչական և ուսումնաօժանդակ կազմը բավարար է նպատակների իրականացման համար:

Եզրահանգում. Հաշվի առնելով, որ բուհի առաքելությունը և նպատակներն իրականացնելու համար հաստատությունն հիմնականում ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 Գիտահետազոտական գործունեության անընդհատ զարգացումը հռչակվել է բուհի առաջնահերթություններից և՛ ՎՊՄԻ-ի 2010-2015 թթ. ռազմավարական ծրագրում և՛ ՎՊՀ-ի 2014-2018 թթ. զարգացման հայեցակարգում: 2015թ. բուհի գիտխորհրդում հաստատվել են Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը և ՎՊՀ-ում գիտության զարգացման 2015-2019թթ. գերակայությունները:

Սակայն ՎՊՀ տարբեր փաստաթղթերում ներկայացված գերակայությունները տարբեր են: Նույնիսկ ինքնավերլուծության մեջ մեկ նշվում է, որ բուհի հետազոտական գերակայություններն են հայագիտությունը և մանկավարժական գիտությունը , մեկ այլ տեղ՝ նաև «գիտությունները կյանքի և երկրի մասին, արդյունավետ և անվտանգ էներգետիկան, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները »

Բարեփոխման է ենթարկվել ոլորտի կառավարման համակարգը: Բուհում մինչև 2013թ. գործել է գիտելիքի և գիտության կենտրոն, որը ղեկավարել է ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, այժմ հիմնվել է գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի հաստիք:

2015թ.-ից «Վանաձորի պետական համալսարանի տեղեկագիրը» ներառվել է ԲՈՀ-ի գիտական հրատարակությունների ցուցակում:

2015 թ. սեպտեմբերից կգործի վերջերս հաստատված «Վանաձորի պետական համալսարանում գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրման կարգը»:

Բյուջեից հետազոտությանը տրամադրվող հատկացումները չեն համապատասխանում բուհի ռազմավարական գերակայություններին:

6.2 Համալասարանի գիտխորհրդում հաստատվել են գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը և զարգացման 2015-2019 թթ. գերակայությունները, սակայն այդ փաստաթղթերին համապատասխան պլանավորում դեռևս չի արվել:

Միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի պլանավորումը կատարվում է ամբիոններում և ամրագրված է աշխատանքային պլաններում, սակայն դրանք չեն բխում վերոնշյալ փաստաթղթերից: Ամբիոնները պլանավորում են հետազոտական աշխատանքները դասախոսների նախասիրություններից ելնելով, սակայն դրանք ժամանակի մեջ հստակեցված չեն: Յուրաքանչյուր դասախոս տարվա սկզբում պարտավորվում է հրատարակել ինչ-որ քանակությամբ հոդվածներ, իսկ տարվա վերջում հաշվետվություն է ներկայացնում: Ամբիոնները կառավարման մարմիններին հաշվետվություններ են ներկայացնում դասախոսների կատարողականի վերաբերյալ:

ՎՊՀ-ը պլանավորում է հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում, մասնագիտական խորհուրդների ստեղծում, մագիստրանտների և ասպիրանտների (հայցորդների) ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում,

գիտական արդյունքների առևտրայնացում և դուրսբերում արտաքին և ներքին շուկա, երիտասարդ գիտական կադրերի աճը խթանող ծրագրերի մշակում, սեմինարներին, մրցույթներին, աշխատակիցների գիտական գործողումների իրականացում, համագործակցություն ՀՀ ԳԱԱ ճյուղային ինստիտուտների և հետազոտական կենտրոնների հետ, սակայն այս ամենը բավականին մշուշոտ է և իրականացման հիմքերը բացակայում են:

Ավելին, բուհը պարբերաբար կազմակերպում է գիտական կոնֆերանսներ, սակայն ժողովածուներում հրատարակված նյութերում բուհի աշխատակիցների հոդվածները նշանակալի տեղ չեն զբաղեցնում: Այսպես, ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ժողովածուում հրապարակված 114 հոդվածից բուհի աշխատակիցների հոդվածներն են 31-ը, այսինքն՝ 27%-ը:

Կառավարման թերություններից է այն, որ ֆինանսական միջոցների սղության հետ մեկտեղ, դրանց օգտագործման արդյունավետությունը ցածր է: Այսպես, 2013թ-ին ամբիոններում գիտահետազոտական աշխատանքները ֆինանսավորելու համար հատկացվել 3.0 մլն. ՀՀ դրամ գումար, որը կազմում էր բյուջեի 0.4%-ը: Սակայն ոչ մի ամբիոն նախատեսված գումարներից օգտվելու հայտ չի ներկայացրել:

6.3 Թեպետ հետազոտությունների ոլորտը զարգացնելու հայեցակարգ է ստեղծվել և որոշված են հետազոտական գերակայությունները, հստակ քաղաքականություն այդ ուղղությամբ դեռևս չի մշակվել: 2014-2015 թթ. ընթացքում մշակվել են հետազոտություններին վերաբերող մի քանի կարգեր: Օրինակ, 2015 թ. սեպտեմբերից նախատեսվում է կիրառել «Վանաձորի պետական համալսարանում գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրման կարգը», որը համապատասխան ֆինասավորման դեպքում կարող է դրական արդյունք տալ: Մինչ այդ մշակվել է «Ակադեմիական ազնվության կարգը», սակայն այդ կարգերը համակարգված չեն մշակվում, չի երևում, որ դրանք ռազմավարության իրագործման մաս են կազմում, ինչը թույլ չի տալիս հաստատել մշակված քաղաքականության առկայությունը:

Հետազոտությունների ռեսուրսային բազան նույնպես թույլ է: Գրադարանում կա ինտերնետային կապ, սակայն բուհը չունի էլեկտրոնային գրադարան: Գրադարանի կատալոգները դեռևս մշակման փուլում են, գրականությունը թվայնացված չէ: Գիտական կաբինետները հագեցված են համակարգիչներով, որոնց մի մասը նորացման կարիք ունի:

Հետազոտությունների համար նախատեսվող բյուջեն մասամբ բաշխվում է ամբիոններից ներկայացված հայտերի, զեկուցագրերի, աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումների հիման վրա:

Համաձայն 2015 թ. բյուջեի նախահաշվի նախատեսվում է 10 000 հազ. ՀՀ դրամ դրամաշնորհների համար, ինչը չի կարող նպաստել հետազոտական աշխատանքների իրական խթանմանը: 2014 թվականին որոշ ամբիոններ (արվեստի, մաթեմատիկայի) հրատարակված գիտական աշխատանքներ չունեն (Ռեկտորի հաշվետվություն, 2014), ինչը նույնպես բուհը կապում է ֆինանսական միջոցների բացակայության հետ:

Բուհը չունի երիտասարդ կադրերի հետազոտական ներուժը զարգացնող ծրագրեր: Անհրաժեշտ լաբորատորիաների կամ պայմանների բացակայության պատճառով հետազոտություններն իրականցվում են այլ բուհերում կամ գիտահետազոտական հիմնարկներում:

6.4 Բուհը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, բայց դեռ դրական արդյունքների այդ ոլորտում չի հասել: Միջազգային ճանաչված ամսագրերում հրատարակումներ չկան:

Բուհը հետազոտական գործունեության միջազգայնացման խոչընդոտ է համարում ՊԴ կազմի օտար լեզվի չիմացությունը, ուստի դասախոսների համար կազմակերպում է վերապատրաստումներ, բացել է Լեզուների կենտրոն: 2012-2013 ուստարվա 2-րդ կիսամյակից համալսարանի լրացուցիչ կրթության բաժնի կողմից կազմակերպում են անգլերենի դասընթացներ, որոնց մասնակցել են 128 աշխատակիցներ, ըստ որում՝ 1-ին մակարդակի դասընթացներին 74 մարդ, 2-րդ մակարդակին՝ 54:

Համալսարանի դասախոսները և ուսանողները մասնակցում են ԱՊՀ և արտասահմանյան բուհերում անցկացվող գիտագործնական գիտաժողովներին:

6.5 Համալսարանի գիտական ոլորտի զարգացման պայմաններից է «գիտության և կրթության ինտեգրումը»: Ուսանողները սկսում են առնչվել հետազոտական գործունեությանը բակալավրիատում կուրսային, ապա և ավարտական աշխատանքների պատրաստման ընթացքում: Մագիստրատուրայի ուսանողները մասնակցում են ամբիոնների կազմակերպած գիտակրթական սեմինարներին, իսկ նրանց ավարտական աշխատանքների մի մասը, որպես կանոն, առնչվում է ամբիոնների հետազոտության թեմաներին: 2015-16 ուստարվանից ներդրվելիք մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը ավելացվել է, դառնալով 48 կրեդիտ (40 %), որից 30 կրեդիտը տրվում է հետազոտական աշխատանքներին ու նախադիպլոմային պրակտիկային:

2012-2014թ.թ. համալսարանի աշխատակիցների կողմից հրատարակվել է 443 հոդված, բուհական 4 դասագիրք, 26 ուսումնամեթոդական ձեռնարկ, 24 մենագրություն: Առավել մեծ հաջողություններ է բուհը գրանցել մանկավարժական և հայագիտության ոլորտներում: Մանկավարժության հետազոտությունների հիմնադրույթների մի զգալի մասը, ըստ բուհի ինքնավերլուծության, տեղ է գտել առանձին դասընթացներում և պրակտիկաների ընթացքում:

Դատողություններ. Գիտության զարգացումը բուհի գերակայություններից է, սակայն բյուջեից հետազոտությանը տրամադրվող հատկացումները չեն հաստատում ուղղության առաջնահերթությունը /բյուջեի 0.4%-ը/: Փորձագետների խումբը համոզված է, որ առանց ֆինանսական կայուն ներդրումների այսօր գիտության զարգացումը անհնար է: Բուհում մշակվել է գիտության զարգացման հայեցակարգ, սակայն ռազմավարական ծրագիր իր հստակ ժամանակացույցով և պատասխանատուներով չկա: Ինքնավերլուծության այս չափանիշի վերջում բուհը կցել է ՎՊՀ գիտական գործունեության և բարելավման աղյուսակ, ուր նշվում է, որ մինչև 2015 թ. վերջ պետք է. «Գիտահետազոտական աշխատանքների կատարման համար սահմանել ժամանակացույց, մշակել հաշվետվողականության համակարգ»:

Բացակայում է երկարաժամկետ պլանավորման հիման վրա արված կարճաժամկետ պլանավորումը: Ճիշտ է ամբիոնները՝ դասախոսների ներկայացված հետազոտության անհատական պլանների հիման վրա կազմում են կարճաժամկետ պլաններ, սակայն դրանք չեն բխում ընդհանուր ռազմավարական ծրագրից և պլանավորման մաս չեն կազմում:

Բուհը կազմակերպում է գիտաժողովներ, որոնց ժողովածուները հրատարակվում են, սակայն միջազգային ճանաչված ամսագրերում /իմպակտ-ֆակտոր ունեցող/

հրապարակումներ չկան, բուհի հետազոտությունները հետաքրքրություն չեն ներկայացնում դոնոր կազմակերպությունների համար, բուհում դեռևս ֆանդրեյզինգի մշակույթ չի ձևավորվել:

Գիտական կոնֆերանսների կազմակերպման ձևը և թեմատիկան փորձագետներին մտածելու տեղիք է տվել, որ դրանք կրում են պլանային բնույթ, չեն կազմակերպվում գիտական քննարկումների ձևաչափով և հետևաբար գիտագործնական նշանակություն չեն ունենում:

Հետազոտության ոլորտում պրոբլեմները բուհը բացատրում է ֆինանսական միջոցների բացակայությամբ, սակայն փորձագետների կարծիքով դրա պատճառն է նաև դասախոսների ծանրաբեռնվածությունը լսարանային ժամերով և ռեսուրսների պակասը, ինչը սահմանափակում է լուրջ հետազոտությունների իրականացման հնարավորությունը:

Բուհի ինքնավերլուծության մեջ նշվում է, որ բուհում երկու գիտաշխատախումբ զբաղվում էր Ստ. Զորյանի և Հովի. Թումանյանի երկերի համաբարբառների կազմման աշխատանքներով: Սակայն 2013թ. աշխատախմբերը լուծարվել են բուհում առկա ֆինանսական դժվարությունների պատճառով: Փորձագետների խումբը գտնում է, որ եթե անգամ հայագիտության ոլորտում /որը բուհի գիտահետազոտական գերակա ուղղությունն է/ վիճակը այդքան ծանր է, հետևապես մյուս ոլորտները առավել անմխիթար վիճակում են:

Պետության կողմից ֆինանսավորում եղել է գիտահետազոտական 4 աշխատանքների համար 2007-2012թթ., սակայն այժմ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չկա:

Ամբիոնների հետազոտական առաջնահերթությունների բացակայությունը, կարող է հանգեցնել հետազոտությանն ուղղված ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ ծախսմանը: Բացի դրանից դա դժվարացնում է դրամաշնորհային միջոցների հայթայթումը:

Փորձագիտական խմբի մոտ մտավախություն կա, որ գիտության ոլորտում սահմանված գերակայությունների լայն ցանկը /հայագիտությունը, գիտությունները կյանքի և երկրի մասին, արդյունավետ և անվտանգ էներգետիկան, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ/ նույնպես հանգեցնում են միջոցների փոշիացմանն և ոչ շոշափելի արդյունքների:

Բուհն առաջին քայլերն է անում ակադեմիական ազնվության ապահովման ուղղությամբ: Բուհում չկա զրագողությունը հայտնաբերող ծրագիր:

Հրատարկված գիտական աշխատանքների ցանկի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք հիմնականում գիտաժողովի նյութեր են կամ ազդեցության գործակից չունեցող ամսագրերում հրապարակումներ, ընդ որում նույնիսկ այս դեպքում հրապարակումների քանակը առանձնապես հուսադրող չէ: Պարզ չէ, թե գերակա հայտարավված ուղղություններից մի քանիսը (օրինակ, արդյունավետ և անվտանգ էներգետիկան, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները) որքանով են համապատասխանում բուհի պոտենցիալին:

Եզրահանգում. փորձագետների կարծիքով թեպետ բուհը գիտության զարգացումը և հետազոտահեն կրթությունը համարում է գերակայություն և ունի հավակնոտ նպատակներ, սակայն վարած քաղաքականությունը դեռևս չի համապատասխանում դրան, իրատեսական չեն գիտության ոլորտում սահմանված գերակայություններ: Բացակայում են միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտական պլանները: Հետազոտական գործունեության և ուսումնառության կապը դեռևս թույլ է: Հետազոտական գործունեությունը շատ սահմանափակ է թե՛ ազգային, թե՛ միջազգային արդյունքների, ինչպես նաև անձնակազմի և

ուսանողների ներգրավվածության առումով: Սակայն բուհն ունի մարդկային ռեսուրսներ և արդյունավետ կառավարման դեպքում կարող է հասնել որոշ հաջողությունների:

Եզրակացություն. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 Համալսարանն ունի 1 վարչական, 3 ուսումնական մասնաշենքեր: Մասնաշենքերը բաժանված են ըստ ուղղվածության՝ հումանիտար, բնագիտական և արվեստագիտական մասնագիտությունների: Նկուղային հարկում կա հրաձգարան և ֆիզդաստիարակության փոքր դահլիճ:

2008թ. կառուցվել է Ս. Մերգելյանի անվան համակարգչային կենտրոն 51 համակարգիչով: Առկա է 8-20 համակարգիչներով համալրված 7 լաբորատորիա, 1-5 համակարգիչներով համալրված 15 ուսումնական կաբինետ, որոնցից 8 հատում առկա են տեսապրոյեկտորներ, ակտիվ գրատախտակներ: Տեխնիկապես հագեցված լսարաններից օգտվելու համար նախապես հայտ է ներկայացվում դասախոսների կողմից, ինչը հավասար հասանելություն է ապահովում:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ համալսարանի բյուջեով ամեն տարի գումարներ են հատկացվում մասնաշենքերի ու այլ շինությունների վերանորոգման համար և ՎՊՀ մասնաշենքերում առկա են բարվոք պայմաններ, սակայն իրականում բարվոք վիճակում է միայն վարչական մասնաշենքը: Մյուսներում պայմաններն այդքան էլ բարվոք չեն, ամբիոնների, դեկանատների, դասախոսական սենյակները որպես կանոն փոքր են, անհարմարավետ ընդմիջման և հանգստի անցկացման համար:

Բուհի լսարանների մի մասը վերանորոգված են և տեխնիկապես հագեցված, մյուս մասը՝ դեռ ոչ: Կաբինետ-ընթերցասրահները կարող են միաժամանակ սպասարկել 232 ընթերցողի, սակայն թվայնացված գրադարան դեռևս չկա, ինչը նվազեցնում է ընթերսասրահների օգտագործման արդյունավետությունը: Այժմ ընթանում են գրադարանի բարեփոխման աշխատանքներ, թվայնացվում են քարտարանները, սակայն այսօրվա դրությամբ գրադարանը դեռևս չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Ֆինանսական պրոբլեմների պատճառով դժվար են ընթանում գրականության նորացման աշխատանքները:

Բուհը չունի էլեկտրոնային գրադարան, թեպետ այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում: ՎՊՀ-ի գրադարանը համագործակցում է Վանաձորի քաղաքային գրադարանի և Նորամուծության ու ձեռներեցության ազգային կենտրոնի հետ, սակայն չունի պայմանագիր ՀՀ հանրային գրադարանի և ՀՀ ԳԱԱ ֆունդամենտալ գրադարանի հետ, ինչը կարող է նպաստել ուսանողներին և աշխատակիցներին գրականությամբ ապահովմանը:

Չկա հանրակացարան, ինչը սահմանափակում է մարզի հեռավոր շրջաններից և այլ մարզերից ուսանողների ներհոսքը: Համալսարանի տարածքում չի գործում սննդի որևէ օբյեկտ:

7.2 ՎՊՀ-ում ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և արտաբյուջետային մուտքերի հաշվին: Ուսման վճարները կազմում են ՎՊՀ-ի բյուջեի մուտքային մասի

գերակշիռ զանգվածը՝ 76.5%-ը, պետական ֆինանսավորումը՝ 17.5%, այլ եկամուտները՝ 6%: Վարձավճարները մարզի աղքատության պայմաններում բարձր են, թեպետ և զիջում են մայրաքաղաքի պետական բուհերի նույն մասնագիտությունների համար վճարին:

Բուհի առաքելությամբ նախատեսվում է պատրաստել «գործնական հմտություններով, կիրառական գիտելիքներով օժտված կոմպետենտ մասնագետներ», ինչը նախատեսում է հարուստ ռեսուրսային բազայի առկայություն: Մինչդեռ բուհը դեռևս չի կարողացել լիովին ապահովել անհրաժեշտ ռեսուրսները: Չի կարողանում էական հատկացումներ կատարել նաև գիտահետազոտական աշխատանքներին:

2012-2014թ.թ. լաբորատորիաների և կաբինետների համար գնվել են շուրջ 31543,5 մլն. դրամի սարքավորումներ: ՎՊՀ-ի ներքին ցանցն այսօր ներառում է 270-ից ավել համակարգիչ, թեպետ մի մասը արդեն հնացել է:

Բուհում կատարված հետազոտությունների համաձայն տարեցտարի ՎՊՀ-ի ֆինանսական մուտքերը նվազում են, ինչը վտանգներ է ստեղծում առաքելության և նպատակների իրագործման համար:

7.3 Բյուջեի բաշխումը չի կատարվում ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա, յուրաքանչյուր նոր ուսումնական տարի բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվը կազմվում է նախորդ տարիների փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա: Բյուջեի բաշխման հիմքում հաշվապահության և ուսումնական մասի կողմից հաշվարկված եկամուտներն են, կատարվելիք ընդհանուր ծախսերը և ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը:

Բյուջեի նախագիծը կազմվում է ռեկտորի, պրոռեկտորների և գլխավոր հաշվապահի կողմից և քննարկվում ՎՊՀ-ի ֆինանսատնտեսական հանձնաժողովի նիստում՝ հավանության արժանանալու դեպքում ներկայացվում ՎՊՀ-ի կառավարման խորհրդի հաստատմանը:

Փաստորեն, ըստ ՄԿԾ-ների նպատակների իրականացման ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը բուհում բացակայում է:

7.4 Բուհը մեծ բարեփոխումներ է նախատեսել մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ: Բուհին հաջողվել է մշակել ՄԿԾ-ների լավ մասնագրեր և ուսումնամեթոդական փաթեթներ, մանրամասն նկարագրված ելքային արդյունքներով: Այդ արդյունքները ապահովելու համար նախատեսվում են դասավանդման և ուսումնառության համագործակցային բազմաթիվ մեթոդներ, մինչդեռ բուհի ռեսուրսային բազան, շենքային պայմանները դրանց ամբողջական իրագործման հնարավորություն չեն տալիս: Նախապես բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են հայտեր: Դրանք գնումների պատասխանատու ստարաբաժանման մասնագետը խմբավորում է ըստ ապրանքատեսակների, ապա գնման համար նախատեսված միջոցների առկայության սահմաններում որոշվում են գնման ենթակա ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալները: Բուհի ֆինանսական բազան հարուստ չէ, այդ պայմաններում ֆինասական միջոցների ոչ պլանային /ըստ ռազմավարության պլանի/ ծախսումը վտանգում է ռազմավարության իրականացումը:

7.5 Տեղեկատվությունն ու փաստաթղթավորման գործընթացները կառավարելի են, փաստաթղթաշրջանառությունը կատարվում է գործավարության կարգով և դեռևս «Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ընդհանուր բաժնի կանոնակարգով: Համալսարան դառնալուցհետո այն դեռևս չի

վերանայվել: Թղթակցության ընդունումը, գրանցումն ու շարժը, դիմումների և գրությունների քննարկման ժամկետները, ելից թղթակցության ձևակերպումը, փաստաթղթերի պահպանումը կանոնակարգված են: Իրավական ակտերը հստակ ձևակերպվում են: Ուսանողների և աշխատակիցների դիմումների, առաջարկությունների և բողոքների ստացման, քննարկման, դրանց ընթացք տալու գործընթացի վերաբերյալ նույնպես կա համապատասխան կարգ: Բուհում անգամ ,շակվել է մատյանի լրացման կարգ:

Տեղեկատվությունը և փաստաթղթաշրջանառությունն իրականացվում են կայք էջով, ներքին ցանցով:

7.6 ՎՊՀ-ն ունի 1 բուժկետ, միայն մեկ մասնաշենքում (աշխատում է 1 բուժքույր): Նա անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնություն է ցույց տալիս: Բուհը յուրաքանչյուր տարի ֆինանսական միջոցներ է տրամադրվում բուժկետին դեղորայք տրամադրելու համար:

Բոլոր առաջին կուրսեցիներն անցնում են պարտադիր բուժզննում, 2013թ.-ից այն կիրառվում է նաև ողջ աշխատակազմի համար:

Բուհը ձեռք է բերում առողջարանային ուղեգրեր, որոնք տրամադրում է համալսարանի աշխատակիցներին: Սակայն գործընթացը կարգավորող կարգ չկա:

Առաջնահերթ միջոցառումների շարքում են «ՖԴՆԱԻՀ» ամբիոնի կազմակերպված միջոցառումները: Առողջ ապրելակերպի գովազդման համար ամբիոնի աշխատակիցները կազմակերպում են տարբեր մարզաձևերից խմբեր, և բուհի ուսանողները հանրապետական ուսանողական մրցումների ժամանակ նույնիսկ մրցանակային տեղեր են գրավում:

ՎՊՀ-ի շտաբը համագործակցում է Արտակարգ իրավիճակների Լոռու մարզի հատուկ ջոկատի հետ, կատարելով նախատեսված պլանային միջոցառումները:

Բուհի շենքային պայմանները դեռևս հնարավորություն չեն տալիս դասախոսների հանգստի ապահովման, մեծ դասախոսական սենյակներ ունենալու համար, բուհում չկա սննդի օբյեկտ, մարզադահլիճ: Այդ ուղղությամբ բուհը պլանավորել է բարելավման գործընթաց իրականացնել:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողները բուհում գտնում են ջերմ և հոգատար մթնոլորտ, սակայն նրանց կարիքներին համապատասխան ռեսուրսները բացակայում են: Փորձագիտական խումբը հանդիպեց *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք* ունեցող երկու ուսանողների հետ: Այդ երկու ուսանողներն ապացուցում են, որ հաշմանդամություն ունեցողները կարող են հաջողության հասնել ՎՊՀ-ում: Համալսարանը մշակում է նաև հեռավար ուսուցման աստիճան չշնորհող դասընթաց *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք* ունեցող ուսանողների համար՝ օգտագործելով Moodle համակարգը: Դա հրաշալի նախագիծ է, որը կնպաստի համալսարանի ներառական լինելուն և գիտահետազոտական արդյունքերի ձեռքբերմանը:

7.7 Բուհում գործում են տրամադրվող ռեսուրսների արդյունավետության գնահատման որոշ մեխանիզմներ: Պետական ֆինանսավորմամբ տրամադրվող միջոցների տնօրինման ու ծախսման արդյունավետությունը մշտապես ստուգվում է համապատասխան կառույցների կողմից: Բուհում գործող դրամաշնորհային ծրագրերի միջոցների կիրառման արդյունավետությունը մշտադիտարկվում է ծրագրերը համադասող կառույցների ու կոորդինացնող կազմակերպությունների կողմից: Բուհը նախատեսել է նաև ներդնել արտաքին ֆինանսական աուդիտի ինստիտուտ:

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը կատարվում է հիմնականում հարցումների միջոցով: Այդ գործընթացը դեռևս լրիվ համակարգված չէ, բայց բուհի մարտավարությունը ռեսուրսների ապահովման ուղղությամբ շտկելու հնարավորություն է տալիս: Օրինակ, հարցումների համաձայն բավարարվածության ամենացածր ցուցանիշը (53%) վերաբերվում է ըստ մասնագիտացումների անհրաժեշտ կաբինետների հագեցվածությանը, ամենաբարձրը (67%)՝ գրադարանի հագեցվածությունն անհրաժեշտ գրականությամբ:

Դատողություններ. ՎՊՀ-ն փորձում է ստեղծել մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր: Փորձագիտների հետ հանդիպումների ընթացքում ուսանողներն ու դասախոսները պնդում էին, որ բուհի ռեսուրսները բավարարում են կրթական արդյունավետ գործունեություն կազմակերպելու համար: Սակայն եթե ռեսուրսների օգտագործումը համեմատություն մեջ դնենք նախորդ չափանիշների հետ, ապա կտեսնենք, որ յուրաքանչյուր չափանիշի բացթողումների մի մասի պատճառը հիմնականում ռեսուրսների սակավությունն է:

Գրադարանում սկսվել են կատալոգների թվայնացման աշխատանքներ, սակայն էլեկտրոնային գրադարան դեռևս չկա: Հաշվի առնելով, որ բուհը չունի հանրակացարան և ուսանողների մի մասը գյուղերից և այլ քաղաքներից են, դա սահմանափակում է հանձնարարված գրականությունը ուսումնասիրելու հնարավորությունը, ուսանողները լրացուցիչ ժամանակ են վատնում գրականության հայթհայտման համար: Մեծապես տուժում են դրանից հատկապես հեռակայի ուսանողները:

Դիտարկված ռեսուրսները քիչ թե շատ կարող են բավարարել միայն հումանիտար և մաթեմատիկական ուղղվածությամբ ՄԿԾ-ների իրականացման համար: Կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա և այս բլոկի մեջ ընդգրկված ՄԿԾ-ների իրականացման արդյունավետությունը ռեսուրսների սակավության պատճառով իջնում է:

Բուհում չկան սննդի և հանգստի համար պայմաններ:

Ամենալուրջ թերություններից է այն, որ բյուջեի բաշխումը չի արվում ըստ ռազմավարական պլանի առաջնահերթությունների: Եթե հաշվի առնենք ֆինասական միջոցների սղությունը և վերջին շրջանում դրանց կրճատումը, պարզ կդառնա, որ դա կառավարման բացթողումներից է, վտանգում է ռազմավարական նպատակների իրագործումը և կարող է միջոցների անհարգի փոշիացման պատճառ հանդիսանալ: Ճիշտ է՝ յուրաքանչյուր տարի բյուջեն կազմելիս հնարավորինս հաշվի են առնվում ստորաբաժանումների կարիքները, սակայն դա նույնպես կարող է ոչ ճիշտ բաշխման տեղիք տալ: Բյուջեի անարդյունավետ բաշխման հետևանքով բուհը պլանավորել է հաստիքների կրճատում անել, ինչը բացասաբար կանդրադառնա կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Այդպիսի ծայրահեղ քայլի դիմելուց առաջ նպատակահարմար էր արտաքին ֆինանսական աուդիտ անցկացնել և պարզել վարվող քաղաքականության թույլ կողմերը:

Ֆինանսական հաշվետվություններից պարզ է դառնում, որ բուհը բավականին ֆինանսական միջոցներ է ներդրել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար, սակայն դրանք դեռևս չեն բավարարում արդյունավետ կրթության ապահովման համար:

Համեմատաբար ավելի լավ վիճակում են տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները: Դրանց մեծապես նպաստում է ներքին ցանցի առկայությունը: Սակայն այցի

ընթացքում պարզվեց, որ ստորաբաժանումներում գործավարությանը խոչընդոտում է թղթի պակասը: Թեպետ աշխատակիցները հավաստում էին, որ ամենինչ կարգին է, սակայն, օրինակ, ուսումնամեթոդական փաթեթի նմուշ փորձագետներին տրամադրելու համար, ստիպված էին թուղթ հայթհայթել:

Բուհը լուրջ պրոբլեմներ ունի առողջապահական և անվտանգության ծառայությունների մատուցման ուղղությամբ, հաշվի չեն առնվում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների պահանջները:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները միավորված չեն մեկ համակարգում, ինչը դժվարացնում է գնահատումը: Անհրաժեշտ է այդ գնահատումը անցկացնել ըստ ՌԾ առաջնահերթությունների և դրանց հիման վրա կազմված տարեկան պլանների:

Եզրահանգում. Փորձագիտական խումբը գտնում է, որ սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար բուհի տրամադրած ռեսուրսները բավարար չեն: ՄԿԾ-ներում ամրագրված դասավանդման և ուսումնառության մեթոդների համար բուհում միշտ չէ, որ կան համապատասխան նյութատեխնիկական բազա և շենքային պայմաններ: Ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները համակարգված չեն: Չունի ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման քաղաքականություն, ինչը խոչնդոտում է ուսումնական միջավայրի ստեղծմանը և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացմանը:

Եզրակացություն. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **անավարար**:

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 Բուհը չունի հաշվետվության կարգ, սակայն կա հաշվետվությունների ներկայացման ձևավորված ավանդույթ: Յուրաքանչյուր տարի ՎՊՀ խորհրդին հաշվետվություն է ներկայացնում բուհի ռեկտորը: Այնուհետև այն դրվում է բուհի կայքում: ՎՊՀ խորհրդին է ներկայացվում նաև նախորդ ֆինանսական տարվա բյուջեի կատարման վերլուծությունը և «Կորոնավիրուսի երևույթների պայքարի համալիր միջոցառումների ծրագրի» կատարողականը: Ռեկտորը հաշվետվությունը ներկայացնում է կոլեկտիվի ժողովին, որին մասնակցում են նաև ուսանողները:

Ոչ ուսումնագիտական ստորաբաժանումների ղեկավարները հաշվետվությունները ներկայացնում են օրացուցային տարվա վերջում, ուսումնագիտական ստորաբաժանումները և դասախոսները՝ ուսումնական տարվա վերջում. ֆակուլտետների ղեկանները ներկայացնում են ուստարվա վերջում և օրացուցային տարվա վերջում: Ուսումնագիտական և վարչատնտեսական ստորաբաժանումների հաշվետվությունները տրվում են ըստ բուհի կառուցվածքի ենթակայությունների:

Հաշվետվությունները տեղադրվում են բուհի կայքում, հատվածաբար հրապարակվում մարզի ՁԼՄ-ներում: Պետական մարմիններից հաշվետվություններ են ներկայացվում ըստ սահմանված կարգի ՀՀ ԿԳ նախարարությանը և ՀՀ վիճակագրական ծառայությանը:

8.2 ՎՊՀ-ն մարզի հասարակությանը տեղեկատվություն է տրամադրվում «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի, տեղական «Լոռի ԹՎ» հեռուստաալիքի «Բանբեր ՎՊՀ» հաղորդումների միջոցով: 2013 թ.-ից «Վանաձորի պետական համալսարան» թերթն առաքվում է նաև այլ պետական բուհեր, Վանաձորի և տարածաշրջանի դպրոցներ:

2006-ին ստեղծվել է լրատվության և տպագրության բաժինը, որը բուհի վերաբերյալ տեղեկատվություն է ապահովում շահակիցներին և լայն հասարակությանը:

ՎՊՀ կայքէջում տեղեկատվություն է տրամադրվում համալսարանի գործունեության գրեթե բոլոր ոլորտների վերաբերյալ:

8.3 Հասարակության հետ կապի ձևավորումը, հաշվի առնելով բուհի հավակնությունները ՀՀ հյուսիսային շրջաններու դերակատարության վերաբերյալ, ռազմավարական նշանակություն ունի: Համագործակցության և կապերի բաժինը կապը հասարակության հետ ապահովվում է հիմնականում վեբ-կայքի միջոցով: Սակայն տեղադրված նյութերը հիմնականում հայերեն են: Համալսարանն ունի տեղեկատվական նյութերն այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն) ներկայացնելու խնդիր: Քանի որ արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը բուհի գերակայությունների թվում են, դա մեծ բացթողում է:

Անցած 5 տարիների ընթացքում բուհի պաշտոնական կայքէջի այցելուների թիվը աճել է: Հասարակության հետ կապերը բուհը ապահովում է նաև սոցիալական ցանցերի միջոցով: Ակտիվ գործում են Facebook-յան մի քանի խմբեր:

Հասարակության հետ կապն ապահովվում է նաև ՁԼՄ-ների հետ համագործակցության միջոցով: Համալսարանի ղեկավար կազմը մասնակցում է հեռուստատեսային կլոր սեղանների, բանավեճ-քննարկումների, մամլո ասուլիսների:

Բուհը տեղեկատվության տրամադրման և հասարակության հետ կապի միջոց է դիտում նաև ընդհանուր բաժնում քաղաքացիների դիմումների ընդունումը և արձագանքումը:

ՎՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորման, հետադարձ կապի ապահովման մեխանիզմները դանդաղ են զարգանում. նորաստեղծ կառույցը մշակում է համապատասխան ընթացակարգեր: Հասարակայնության հետ կապերի համակարգը դեռևս ինստիտուցիոնալացված չէ:

8.4 Բուհը որոշակի ուշադրություն է դարձվում սոցիալ-դաստիարակչական գործունեությանը՝ կազմակերպում մշակութային, ռազմահայրենասիրական, մարզական միջոցառումներ, բաց դասեր են կազմակերպվում Արցախյան ազատամարտի մասնակիցների հետ:

ՎՊՀ-ն սատարում է սոցիալապես անապահով խավին, կատարվում են ուսման վարձի զեղչեր, անապահով ընտանիքների երեխաների համար կազմակերպվում են բուհ ընդունվելու համար անվճար պարապմունքներ:

Լեզուների ուսուցման կենտրոնը շուկայականից ցածր գներով ծառայություն է մատուցում ուսանողությանը և հասարակությանը:

ՎՊՀ-ի ծառայություններ է մատուցում նաև հոգեբանական և իրավաբանական կենտրոնների միջոցով:

Իրականացվում է «Վերադարձող ուսանող» ծրագիրը, որի նպատակն է օգնել վերապրոֆիլավորվել բուհի այն շրջանավարտներին, որոնք ստացված որակավորմամբ չեն աշխատում: Հիմքեր են ստեղծվում հեռավար կրթության կազմակերպման համար, ինչը կբարելավի հեռակայող և հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսման պայմանները:

ՄԿԾ-ների հումանիտար կրթամասի մի շարք դասընթացների միջոցով՝ «Հայ ժողովրդի պատմություն», «Քաղաքակրթությունների պատմություն», «Փիլիսոփայություն» և այլն, բուհը փորձում է քաղաքացիական որակներ հաղորդել իր ուսանողներին, տարածել համամարդկային և հայրենասիրական արժեքներ:

Դատողություններ. Փորձագետան խմբի կարծիքով հաշվետվողականության սահմանված կարգ չունենալով հանդերձ բուհում հաշվետվությունների ներկայացման պրակտիկան լայնորեն տարածված է: Հաշվետվությունները լավ միջոց են հանդիսանում բուհի առաքելության և զարգացման հայեցակարգի իրականացումը գնահատելու համար: Սակայն քանի որ հաշվետվության մեխանիզմը հղկված չէ, այն չի արվում ըստ ՌԾ-ի ուղղությունների, ինչը կառավարման համակարգի բացթողումներից է:

Փորձագետները դրական են գնահատում այն փաստը, որ բուհը, որպես իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոց է օգտագործում կայքը, օգտագործվում են նաև սոցցանցերի հնարավորությունները, սակայն ՋԼՄ-ների հետ աշխատանքը պատշաճ մակարդակով չի կատարվում:

Բուհը լավ փորձ ունի հասարակայնության հետ հետադարձ կապի ուղղությամբ. դպրոցների հետ մշտական կապ է ապահովում, գործատուների հետ փորձում է համագործակցության եզրեր գտնել, ծառայություններ է մատուցում մի շարք կենտրոնների միջոցով, սակայն այդ ամենը համակարգված բնույթ չի կրում, ուստի բավարար ելքային արդյունքներ բուհի համար չի ապահովում: Վերոնշյալ մեխանիզմների գնահատում բուհը չի արել, հետևապես արդյունավետության վերաբերյալ տվյալները բացակայում են: Բուհը ստանձնելով ՀՀ հյուսիսային շրջաններում գիտակրթական ծառայություններ մատուցողի իր առաքելությունը փորձում է գտնել ուղիներ մարզային ղեկավարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ավելի սերտ համագործակցելու համար:

Փորձագետների կարծիքով բուհում մի շարք կենտրոնների ստեղծումը լավ գաղափար է, և դրանք նույնպես կարող են հասարակությանը լրացուցիչ ծառայություններ մատուցող հաստատություններ դառնալ, սակայն ավելի ճիշտ կլինի, որ դրանք լինեն ինքնաֆինասավորվող կազմակերպություններ և նստած չլինեն բուհի բյուջեի վրա:

Եզրահանգում. ՎՊՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը, ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը, ստեղծել է հասարակությանն արժեքների փոխանցման մեխանիզմներ:

Եզրակացություն. Բուհի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Համալսարանի առաքելության մեջ կարևորվում է եվրոպական միասնական կրթական տարածք ինտեգրվելը: Արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման անհրաժեշտությունը ընդգծվում է Համալսարանի զարգացման 2010-2015թթ հայեցակարգում: Այն համարվում է բուհի գերակայություններից մեկը: ՎՊՀ-ի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման համար ՎՊՀ գիտխորհուրդը հաստատել է մի շարք փաստաթղթեր: Գործընթացն կարգավորելու համար ստեղծվել են մի քանի կարգեր՝ կրթական բարեփոխումների և կապերի բաժնի կարգ, նույն բաժնի գործունեության և ռազմավարական համագործակցության զարգացման կարգ, մշակվում է ամենամյա միջազգային գործունեության զարգացման ռազմավարություն:

Միջազգայնացմանը նպաստելու համար ՎՊՀ լեզուների ուսուցման կենտրոնում դասավանդվում են մի շարք օտար լեզուներ (անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն)՝ լեզուների իմացության իրազեկման համաեվրոպական համակարգի պահանջներին համապատասխանող ծրագրերով:

ՎՊՀ-ի արտաքին կապերի զարգացումն ուղղված է նաև հանրապետության այլ բուհերի, արտաքին շահակիցների հետ արդյունավետ կապերի ստեղծմանը:

ՎՊՀ-ն սերտ կապեր է հաստատել նաև Լոռու տարածաշրջանի դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ: Կրթական բարեփոխումների և արտաքին կապերի բաժնում 2010 թ-ից կազմավորվել է բուհ-դպրոց կապերի ենթաբաժին, որը գործում է ըստ Համալսարանի գիտխորհրդի կողմից ընդունած Կարգի և տարեկան աշխատանքային պլանի:

9.2 ՎՊՀ-ում 2009-2012թթ ընթացքում արտաքին կապերով զբաղվում էր կրթական բարեփոխումների և արտաքին կապերի բաժինը: Բաժնի վարիչը ենթարկվում էր ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, իսկ 2013թ.-ի հոկտեմբերի 1-ին բաժինը վերանվանվել է «Կապերի և համագործակցության բաժին» և ենթարկվում է գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորին: Բաժինը տեղեկատվական աշխատանք է կատարում առաջարկվող դրամաշնորհային ծրագրերի, հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, այլ միջոցառումների վերաբերյալ ՎՊՀ ուսանողությանը, պրոֆեսորադասախոսական անձնակազմին, վարչական աշխատողներին տեղեկացնելու ուղղությամբ: Տեղեկատվություն է տալիս և գործուն օգնություն ցուցաբերում Էրազմուս Մունդուս ծրագրերին դիմողներին՝ անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ձևակերպելու նպատակով: Բաժնի աշխատակիցները դիմավորում են արտասահմանից ժամանած հյուրերին, զբաղվում նրանց համար հարմարավետ պայմաններ ստեղծելու և սեմինարների կազմակերպչական հարցերով:

9.3 Վերջին երեք տարիների ընթացքում միջազգային գործունեության զարգացման ռազմավարությամբ և աշխատանքային պլանով նախատեսված բոլոր ուղղություններով բուհն ունի առաջխաղացում: Համալսարանը 10 միջազգային կոնսորցիումների անդամ է: Այդ կոնսորցիումների անդամ բուհերի ընդհանուր թիվը 157 է /եվրոպական և հետխորհրդային

երկրների/: ՎՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի ՌԴ, Բելոռուսի, Ղազախստանի, Լեհաստանի, Գերմանիայի մի շարք համալսարանների հետ:

ՎՊՀ համագործակցում է հանրապետության այլ բուհերի հետ՝ բուհական կոնսորցիումի շրջանակներում:

ՎՊՀ-ն շրջանավարտների համար աշխատաշուկայի հնարավորություններից օգտվելու, գործատուների հետ հետադարձ կապերի ապահովման նպատակով համագործակցում է մի շարք կազմակերպությունների հետ՝ IREX, Բաց հասարակության Համալսարանի աջակցության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ (Սորոսի հիմնադրամ), Վիվա Սել ընկերություն, Եվրոհանձնաժողովի կրթական, առուդիովիզուալ և մշակութային գործակալության (EACEA) հայաստանյան գրասենյակ: Համալսարանը վերջին շրջանում ակտիվորեն մասնակցում է Տեմպուս և Էրազմուս Մունդուս ծրագրերին:

ՎՊՀ-ն միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի ակտիվ անդամ է, 9 դրամաշնորհային նախագծերի գործընկեր: Հայաստանում Erasmus+ ազգային գրասենյակի վիճակագրական վերլուծության համաձայն՝ համալսարանը միջազգային նախագծերի թվով Հայաստանում ԵՊՀ-ից հետո զբաղեցնում է 2-րդ տեղը:

Համագործակցության կարևորագույն ուղղություններից է մասնակցությունը Լոռու մարզում իրականացվող տարածաշրջանային ծրագրերին: Ֆրանկոֆոնիայի զարգացման և տարածման վերաբերյալ Լոռու մարզի մարզպետարանի կողմից կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում ՎՊՀ-ն երկկողմանի պայմանագրի շրջանակներում 2008թ-ից ակտիվորեն աշխատում է Ֆրանսիայի՝ ֆրանսերեն լեզվի թոշակառու ուսուցիչների (ԳՐԵՖ) կազմակերպության հետ:

Վերջին տարիներին ՎՊՀ-ն համագործակցության պայմանագրեր է կնքել արտասահմանյան 14 բուհերի հետ, հանդիսանում է 10 միջազգային կոնսորցիումների անդամ, ինչը հնարավորություն է ստեղծել ՎՊՀ աշխատակիցներին և ուսանողներին մասնակցել միջմշակութային հետազոտությունների լաբորատորիայի աշխատանքներին (Կոստրոմա- 2010, 2011 թթ, Դարմշտադտ, 2012): Նրանց կողմից ներկայացված հոդվածները տպագրվել են լաբորատորիայի աշխատանքների նյութերի ժողովածուում: Համատեղ հրատարակվել է ժողովածուների 8 հատոր: ՎՊՀ-ի դասախոսներից հրավիրվել են Դարմշտադտի կիրառական գիտությունների համալսարանում դասախոսություններ և սեմինարներ անցկացնելու համար: 2013թ-ին լաբորատորիայի աշխատանքներն անցկացվեցին Վանաձորում:

ՎՊՄԻ մասնակցել է Բաց հասարակության Սորոսի հիմնադրամի «Կրթության որակի ապահովման և գնահատման համակարգ» №15110 դրամաշնորհային ծրագրին, որը մեծապես նպաստեց որակի ապահովման կառույցի մոդելի ստեղծմանը: Մասնակցելով Սորոսի հիմնադրամի մեկ այլ նախագծի՝ «Կրթական ծրագրերի որակի բարձրացման մեխանիզմների մշակում և ներդրում «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության հիման վրա» աշխատանքներին (դրամաշնորհ №16532), ստեղծվեց մագիստրոսական կրթական ծրագիրը: Այս ծրագրի մոդելով ՎՊՀ մշակել է «Կրթական ծրագրերի մշակման և ներդրման հայեցակարգ», և համալսարանի բոլոր կրթական ծրագրերը վերափոխվել են թյունինգ մեթոդաբանությամբ:

ՎՊՀ կապեր է հաստատել ոչ միայն եվրապական տարածքի, այլ նաև ԱՊՀ երկրների հետ: Բուհը սերտ կապեր ունի Ռուսաստանի Դաշնության հետաքրքրությունները ներկայացնող «Ռոսստրուդնիչեստվո» գործակալության Հայաստանի բաժանմունքի հետ:

Համագործակցությունը ներառում է գիտագործնական միջոցառումներ և ռուսաց լեզվի ուսուցման դասընթացներ:

Արդյունավետ կապեր են ստեղծվել «Վիվա Սել ՍՍՍ» կազմակերպության հետ:

2010թ-ին Համալսարանի կրթական բարեփոխումների բաժնի մասնագետը ստացավ IREX-ի դրամաշնորհը՝ ԱՄՆ-ում մագիստրոսական կրթություն ստանալու համար:

ՎՊՀ- ներգրավված է Տեմպուս ծրագրի մի շարք նախագծերում: MAHATMA- նախագծի իրականացման արդյունքում մշակվել «Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագիրը: VERITAS- նախագիծը միտված է զարգացնելու հետբուհական կրթությունը: LeAGUe- նախագծի շնորհիվ Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում մշակվելու է հարատև կրթության ցանց: SSRULLI- նախագիծը միտված է ցկյանս ուսումնառությանը: GOVERN – նախագծի նպատակն է կատարելագործել բուհի կառավարման համակարգը:

Համալսարանը միջբուհական կոնսորցիումի կազմում ընդգրկված է Էրազմուս Մունդուս դրամաշնորհային ծրագրի երկու երկարաժամկետ նախագծերում՝ «IANUS» և «EMINENCE»: Ներկայումս ՎՊՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի թվով 26 ուսանողներ սովորել կամ սովորում են տարբեր եվրոպական երկրների համալսարաններում (Ֆրանսիա, Պորտուգալիա, Շվեդիա, Լեհաստան, Ռումինիա, Իսպանիա): EMINECE նախագծի երրորդ փուլի արդյունքում 7 ուսանող պետք է մեկնեն սովորելու Պորտուգալիայում, Շվեդիայում, Ռումինիայում և Լեհաստանում:

ՎՊՀ-ի 6 դասախոս հրավիրվել է Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա՝ դասավանդելու և հետազոտություն անցկացնելու նպատակով:

EMINENCE նախագծով ՎՊՀ-ում սովորում է Լեհաստանի Ա. Միցկևիչի անվան համալսարանից մեկ մագիստրանտ, աշխատելու են եկել 2-ական դասախոսներ Ռումինիայից և Լեհաստանից: EMINENCE նախագծի նույն փուլով 2015թ. հոկտեմբերին Լեհաստանի Ա. Միցկևիչի անվան համալսարանից ՎՊՀ են ժամանելու 2 դասախոս:

Բուհը այժմ մասնակցում է ERASMUS + ծրագրին: Եվրոպական մի շարք բուհերի հետ ինտենսիվ բանակցություններ են տարվում նաև երկակի /double/ դիպլոմ և համատեղ /joint/ աստիճան շնորհելու ուղղությամբ:

Արտաքին կապերով զբաղվող աշխատակիցները կատարում են նաև որոշակի աշխատանք՝ մեր ուսանողներին և աշխատակիցներին հանրապետության այլ բուհերում գործող նույնանման ծրագրերի մասին տեղեկատվության տարածման նպատակով: Այսպես, Համալսարանի մագիստրատուրայի մեկ շրջանավարտ ստացել է Էրազմուս Մունդուս ծրագրի Երևանի համալսարանում գործող BACKIS նախագծի դրամաշնորհը:

9.4 Բուհի միջազգայնացմանը խոչընդոտող հանգամանքներից մեկը՝ անգլերենի իմացության ոչ պատշաճ մակարդակն է: Վերջին երեք տարիների ընթացքում բուհում նկատվում է որոշակի ակտիվություն. 2012 թ.-ից բուհում գործում է լեզուների ուսուցման կենտրոն, իսկ 2013թ.-ից նաև Լրացուցիչ կրթության բաժինը, որի գործառույթներից մեկն է կազմակերպել անգլերենի դասընթաց աշխատակազմի համար: Վերջին երեք տարիների ընթացքում բուհի աշխատակազմի 128 անդամ հաճախել է կենտրոնի կողմից կազմակերպված անգլերենի դասընթացներին: 2012-2014թթ.-ին օտարկեկրյա ուսանողներին առաջարկվել են անգլերեն լեզվով 15 դասընթացներ:

Իրականացված միջոցառումների արդյունավետությունը բարձր չէ, շահակիցները դեռևս չունեն օտար լեզուների իմացության անհրաժեշտ մակարդակ, և բուհը դրա պատճառների վերհանում չի կատարել:

Դատողություններ. Փորձագիտական խումբը համոզվեց, որ արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը ոչ միայն հոչակված են ՎՊՀ գերակայություններ, այլ այդ ուղղությամբ բուհը նպատակաուղղված քաղաքականություն է վարում: Արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործընթացը կանոնակարգվել է, ստեղծվել է Կապերի և համագործակցության բաժին:

Միջազգայանցման գործընթացը սկսվել է բավականին լավ պրակտիկ գործունեությամբ: Ուսանողները տեղյակ են միջազգային շարժունության հնարավորությունների և համալսարանի համար միջազգայանցման գործընթացի առավելության մասին: Բարձր կուրսերի ուսանողներն իսկապես ողջունում են այդ գործընթացը և վերջին հինգ տարիների ընթացքում նկատել են զգալի առաջընթաց: Ուսանողները և անձնակազմը դրական են արտահայտվում մշակութային փոխանակման, մյուս ժողովուրդների մշակութային արժեքներն ըմբռնելու, «ցանցում» ներգրավված լինելու, միջազգային և համաշխարհային համակարգ ինտեգրվելու կարևորության մասին:

Որոշ ամբիոններ ներգրավված են կապեր հաստատելու և ցանցում համագործակցելու գործընթացում: Արտաքին կապերի զարգացման պլանների մշակման համար համալսարանն ունի ներուժ և կարող է հենվել ներկայիս անձնակազմի անդամների փորձի ու փոխըմբռնման վրա:

Փորձագետները չէին կարող անտեսել վերջին տարիների ընթացքում այս ոլորտում կատարված շոշափելի փոփոխությունները: Ճիշտ է գործընթացին մեծապես նպաստել են նաև ՀՀ բանակցությունները Արևելյան գործընկերության մեջ ներգրավվելու ուղղությամբ և ԵՄ դրամաշնորհային քաղաքականության աշխուժացումը Հայաստանում: Բայց բաժնի աշխատակիցների ակտիվությունը, համագործակցային ակտիվ քաղաքականությունը հանգեցրեցին դրական արդյունքների, և բուհը ընդգրկվեց մի շարք դրամաշնորհային ծրագրերում:

Փորձագետների կողմից դրական է գնահատվել նաև այն, որ յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագրից բուհն օգուտ է քաղել՝ ստեղծելով թունինգ մեթոդաբանությամբ ՄԿԾ-ներ, ներդնելով արդյունավետ գործող որակի ապահովման մոդել: Ներկայիս դրամաշնորհային ծրագրերը նպաստում են հետբուհական կրթության զարգացմանը, բուհի կառավարման կատարելագործմանը, հասարակական պատասխանատվության բարձրացմանը: Դրական է, որ բուհը ծրագրեր է իրականացնում ոչ միայն ԵՄ, այլ նաև Եվրազեսի երկրների բուհերի հետ:

Բուհի միջազգայկնացմանը խոչընդոտում է օտար լեզուների չիմացությունը: Դրա համար իրականացվող վերապատրաստման ծրագրերը դեռ արմատական փոփոխություն չեն առաջացրել: Սակայն արդեն կան առաջին հաջողությունները ուսանողների և ՊԴ կազմի փոխանակման ուղղությամբ:

Արդյունավետ է ընթանում բուհի արտաքին կապերի զարգացումը հանրապետության և մարզի շահակիցների հետ:

Բուհը գիտակցում է չափանիշի ապահովման ուղղությամբ իր բոլոր թերությունները: Դրա ապացույցն է կատարած SWOT վերլուծությունը և այդ ուղղությամբ բուհի անհրաժեշտ քայլերի մասին հետագա շարադրանքը:

Եզրահանգում. Հաշվի առնելով, որ համալսարանն արտաքին կապերի միջոցով իսկապես խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը, միջազգայնացման համար ունենալով սուղ ֆինանսական միջոցներ, բուհը նպատակին հասնելու համար լայնորեն ընդգրկվել է

տարբեր դրամաշնորհային ծրագրերում, ունի նաև երկկողմ պայմանագրեր և հաստատել ու արդյունավետ զարգացնում է արտաքին կապերը հանրապետության և մարզի շահակիցների հետ, հնարավորություններ է ստեղծել ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու համար, փորձագիտական խումբը չափանիշը գնահատում է բավարար:

Եզրակացություն. Բուհի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՎՊՀ ՈԱ համակարգի քաղաքականությունը բխում է բուհի առաքելությունից: ՈԱ համակարգը իր գործառույթներն իրականացնում է՝ ըստ որակի ապահովման ռազմավարական պլանի, գործունեության վարման հստակ քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի: ՈԱ գործընթացները համակարգվում են ՈԱԿ-ի կողմից. բոլոր ստորաբաժանումներում գործում են ՈԱ աշխատախմբեր պարբերաբար անց է կացվում մշտադիտարկում (մոնիթորինգ) և կրթական գործընթացի աուդիտ, որոնց արդյունքները ներկայացվում են գիտխորհրդի, ռեկտորատի նիստերին, քննարկվում ֆակուլտետներում, ամբիոններում և այլն: Այս գործընթացին ակտիվ մասնակցում են նաև ուսանողները:

10.2 Որակի կառույցը ստեղծվել է 2010 թ., անկախ կառույցի կարգավիճակ է ձեռքբերել 2013 թ-ից: Անմիջապես հաշվետու է գիտխորհրդին և ռեկտորին:

ՈԱ ներքին համակարգի զարգացմանը նպաստեց «Որակի ապահովման ներբուհական համակարգի ստեղծում և ամրապնդում» տեխնիկական աջակցության ծրագիրը, որի շնորհիվ հարստացվեց ՈԱԿ-ի ռեսուրսային բազան:

ՈԱ գործընթացների ծավալմանը նպաստեցին նաև դրամաշնորհային ծրագրերն ու ՈԱԱԿ –ի և բուհի ՈԱԿ-ի կողմից կազմակերպած վերապատրաստումների շարքը, որոնց մասնակցել են դասախոսներ, վարչական աշխատողներ, ուսանողներ:

ՈԱԿ-ի աշխատանքներում ընդգրկված են 3.5 հաստիք: ՈԱԿ-ը ֆակուլտետային հանձնախմբերի միջոցով փորձում է ստեղծել ցանցային համակարգ: Աշխատանքներին մասնակցում են նաև ուսանողներ և գործատուներ: Յուրաքանչյուր տարի բուհի ղեկավարությանը նախապես ներկայացվում է հաջորդ տարվա աշխատանքների ծավալը, դրա հիման վրա կառույցը ֆինանսավորվում է:

10.3 Շահակիցների մասնակցությունը տեղի է ունենում ֆակուլտետային ՈԱ-ն հանձնախմբերի միջոցով: Ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում պարբերաբար անց են կացվում հարցումներ և բաշխվում հարցաթերթիկներ (օրինակ, «Դասախոսը ուսանողի աչքերով», ուսանողների վերաբերմունքը ուսումնական գործունեության, նրանց հոգեբանական հարմարվողականության,

էլեկտրոնային թեստավորման, անձնային և մասնագիտական որակների գնահատման և բարելավման նկատմամբ):

Նկատելիորեն բարելավվել է ուսանողների մասնակցությունը ՈԱ գործընթացներին, թեև դեռևս առկա են խնդիրներ, որոնք առայժմ բավարար լուծում չեն ստացել /օրինակ, ուսանողների ցածր մոտիվացիան/: Որակի ապահովման կառույցը շահակիցներին ներգրավելու համար լայնորեն օգտագործում է կլոր-սեղանների, քննարկումների պրակտիկան: Դատելով փորձագիտական խմբի դասախոսների և ուսանողների հետ կազմակերպած ֆոկուս խմբերի արդյունքներից ՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ տեղեկացվածությունը բուհում բարձր է:

10.4 ՎՊՀ-ի ՈԱԿ-ի կանոնակարգը հաստատվել է բուհի ԳԽ-ի կողմից: ՎՊՀ որակի ապահովման համակարգը գործում է ՎՊՀ-ի հայեցակարգի և զարգացման ռազմավարական պլանի հիման վրա, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով: 2013 թ. լույս է տեսել որակի ապահովման ձեռնարկ, որտեղ ներկայացված են ՈԱ մոդելները, մշակման մեթոդաբանությունը, առաքելությունը, խնդիրները, նպատակները, հայեցակարգը: Որակի ապահովման հայեցակարգում ներառված են կենտրոնի գործունեության հիմնական սկզբունքներն ու ռազմավարությունը: Ներկայումս նախապատրաստվում է նոր ձեռնարկ, որտեղ հաշվի են առնված միջազգային և տարիների ընթացքում բուհի ձեռք բերած փորձը:

ՈԱԿ-ի հարցաթերթիկները մշակվում են հինգ տարվա համար, այնուհետև անհրաժեշտության դեպքում լրամշակման են ենթարկվում՝ արդյունքները առավել հուսալի և օբյեկտիվ դարձնելու նպատակով:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգը վերջին 3 տարիների ընթացքում անցկացրել է բազում հետազոտություններ և հարցումներ, որոնց արդյունքների վերլուծությունը հնարվորություն է տալիս արտաքին գնահատում անցկացնել: Արտաքին գնահատման համար մեծ կարևորություն ունի ինքնավերլուծության մեխանիզմների ներդրումը: Այդ նպատակով տարբեր ֆակուլտետներում ստեղծվել են ինքնագնահատման գործընթացի իրականացման համար ֆակուլտետային հանձնաժողովներ, որոնցում ընդգրկված են ինչպես դասախոսներ, այնպես էլ ուսանողներ: Որակի ապահովման կենտրոնը հանդես է եկել համակարգողի դերում: Դա ոչ միայն նպաստել է շահակիցների ներգրավվմանը, նրանց տեղեկացվածության բարձրացմանը, այլև ստորաբաժանումների կարիքների վերհանմանը, առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների ստացմանը:

Ինքնավերլուծության զեկույցի տարբեր չափանիշների վերլուծության համար ստեղծվել են խմբեր, սակայն պատասխանատվությունը դրվել է կոնկրետ անձերի վրա: Գործընթացը համակարգել է ՎՊՀ ռեկտորը: Յուրաքանչյուր չափորոշիչ պարբերաբար քննարկման է ենթարկվել վերոհիշյալ խմբի կողմից, այնուհետև ներկայացվել ստորաբաժանումներին:

Ինքնավերլուծությունների առկայությունը բավարար հիմքեր է ստեղծում արտաքին գնահատման համար:

10.6 ՎՊՀ որակի ապահովման կառույցը գործունեության թափանցիկությունը ապահովելու համար անընդհատ տեղեկատվություն է տեղադրում բուհի կայք-էջում:

Ներքին և արտաքին շահեկիցների տեղեկացվածությունն ապահովելու համար կիրառում է նաև մի շարք այլ մեխանիզմներ. հաշվետվությունների ներկայացում, դասընթացների տեղեկագրքերի հրատարակում, ՎՊՀ-ի կայք-էջում տեղադրվող տեղեկատվությունը ներքին գործընթացների և կանոնակարգերի վերաբերյալ, ֆակուլտետների ուսումնական և

գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով ամենամյա իրականացվող ներքին ստուգումները, որի արդյունքները քննարկվում են ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովների հետ, իսկ այնուհետև ԳԽ-ում, իրազեկվածության բարձրացման պարբերական հանդիպումներ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որտեղ քննարկվում են կենտրոնի կողմից կատարված աշխատանքները, առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները:

Դատողություններ. ՎՊՀ կարևորելով որակի ապահովման գործընացները ստեղծել է որակի ապահովման հատուկ կառույց: ՈԱԿ-ի գործառույթները վերանայվել են և այն ձեռք է բերել անկախ կառույցի կարգավիճակ, որն անմիջականորեն ենթարկվում է ռեկտորին և գիտխորհրդին: ՈԱԿ-ն ունի անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներ: Ֆինանսական ռեսուրսները ավելի սահմանափակ են, սակայն հնարավորության դեպքում բուհը փորձում է բավարարել կարիքները: Բուհում ստեղծվել է որակի ապահովման ոլորտը կանոնակարգող փաստաթղթերի շարք: Աստիճանաբար ձևավորվում է որակի ապահովման ցանցային համակարգը:

ՈԱԿ-ը որակի ապահովման մշակույթի ձևավորման նպատակով, հաշվի առնելով աշխատակազմի և ուսանողության մի մասի թույլ մոտիվացիան, պարբերաբար կազմակերպել է իրազեկության բարձրացման սեմինարներ, վերապատրաստումներ, շահակիցներին ներգրավել է գնահատման, մոնիթորինգի, աուդիտի տարբեր գործընթացներում, համոզված լինելով, որ որքան մեծ լինի ընդգրկված շահակիցների թիվը, այնքան ավելի արդյունավետ և արագ կձևավորվի որակի ապահովման համակարգը:

ՈԱԿ-ին հաջողվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության աշխատանքներին ներգրավել է ամբողջ կոլեկտիվին և ուսանողությանը: Ինքնավերլուծությունը, ՈԱԿ-ի կողմից անցկացված բազում հարցումներն ու վերլուծությունները մեծապես հեշտացնում են արտաքին գնահատումը:

ՎՊՀ ՈԱԿ-ը որդեգրել է թափանցիկ, բաց համագործակցային աշխատաոճ: Փորձագիտական այցի ընթացքում փորձագետները համոզվեցին, որ ՈԱԿ-ն արդյունավետ աշխատանք է կատարում ուսանողների, դասավանդողների և գործատուների շրջանակներում: Կառույցի հզորացման ուղղությամբ տարվող աշխատանքներն արդեն տեսանելի են:

Այդ ամենօրյա աշխատանքի շնորհիվ է, որ աստիճանաբար փոխվում է որակի ապահովման գործընթացների և ՈԱԿ-ի նկատմամբ վերաբերմունքը բուհի ներսում: Որակի ապահովման կառույցի ծավալած գործունեությունը նպաստում է բուհում բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը, շահակիցների կարիքների ժամանակին վերհանմանը, խնդիրների լուծմանը: Աստիճանաբար ՈԱԿ-ը դառնում է բուհի մենեջմենտի կարևոր մաս, ինչը միանշանակ կնպաստի բուհի կառավարման համակարգի բարելավմանը:

Սակայն դեռևս անելիքներ կան կառավարման մարմիններ - ՈԱԿ հարաբերությունները հստակեցնելու, գործառույթները տարանջատելու ուղղությամբ: Անհրաժեշտ է, որ որակի ապահովման շրջափուլը `ՊԻԳԲ, կիրառվի բուհի բոլոր ստորաբաժանումների կողմից և տարածվի բոլոր գործընթացների վրա:

Եզրահանգում. ՎՊՀ-ում մշակվել են որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր: ՈԱԿ-ն ունի մարդկային և նյութական բավարար ռեսուրսներ, ներգրավել է որակի ապահովման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցներին, ապահովում է գործունեության թափանցիկությունը: Որակի ապահովման համակարգը պարբերաբար

վերանայվում է: Որակի ապահովման ներքին համակարգը զարգացման փուլում և նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը:

Եզրակացություն Բուհի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	*ՈՐՈՇՈՒՄ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակար	Բավարարում է

Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Լիլիթ Զաքարյան: 1988 թ.-ին ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը, ստանալով պատմության և սովետական իրավունքի ուսուցչի դիպլոմավորված մասնագետի որակավորում: 1993 թ.-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2008 թ.-ին՝ պատմություն մասնագիտության դոցենտի գիտական կոչում: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է Հայաստանում քաղաքական համակարգի փոխակերպմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, քաղաքականության գենդերային տեսանկյուններին վերաբերվող թեմաները: Դասավանդել է Հյուսիսային համալսարանում, Խ.Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական համալսարանում, Սլավոնական համալսարանում: Հյուսիսային համալսարանում եղել է Իրավաբանության և լրագրության դեպարտամենտի դեկան, Լրագրության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, Ուսումնական վարչության պետ: Այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, Հյուսիսային համալսարանում ղեկավարում է Որակի ապահովման վարչությունը: Հյուսիսային համալսարանում 2009-2010 թթ. մասնակցել է ՈԱԱԿ-ի կազմակերպած ծրագրային փորձնական հավատարմագրման աշխատանքներին, 2012-2013 թթ.՝ ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրման: Անցել է ՈԱԱԿ վերապատրաստումները, ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբում փորձագիտական այցեր է կատարել հանրապետության մի շարք բուհեր:

Ալան Հոու – 1982թ.-ին ավարտել է Բաթ Սպա համալսարանը կիրառական կենսաբանություն մասնագիտությամբ: 1985թ.-ին ստացել է կրթության ոլորտում հետազոտողի որակավորում: 1994թ.-ին մագիստրոսի որակավորում է ստացել Բաթ Սպա համալսարանական քոլեջում: 2014թ.-ից Բարձրագույն կրթության ակադեմիայի ավագ գիտաշխատող է: Ներկայումս Բաթ Սպա համալսարանի «Կրթություն և տարրական ուսումնառություն» ՄԿԾ-ի ղեկավարն է և ֆակուլտետի դեկանը: 2006թ.-ից հանդիսանում է ծրագրի ղեկավար, իսկ 2003թ.-ից դասախոս: Մի շարք համալսարաններում եղել է քննական հանձնաժողովի անդամ, իրականացրել է արտաքին փորձաքննություններ: Ներկայումս հանդիսանում է Բրիտանական կրթական հետազոտությունների ասոցիացիայի փոխնախագահ: Զեկուցումներով հանդես է եկել տարբեր միջազգային սեմինարներում և կոնֆերանսներում: Ունի մի շարք հրապարակումներ:

Վարուժան Աթաբեկյան - 1983 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետը, 1983 - 1986 թթ. սովորել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի Մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետի ասպիրանտուրայում:

2011 թ. ստացել է Ֆիզ. մաթ. գիտ. դոկտորի գիտական աստիճան՝ «Ազատ բեռնսայդյան խմբերի ենթախմբերի և ավտոմորֆիզմների մասին», Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Վ.Ստեկլովի անվ. Մաթեմատիկայի ինստիտուտ: 2012 թ-ին ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Խմբերի կոմբինատոր տեսություն և բազմաձևություններ, երկրաչափական մեթոդները խմբերի տեսությունում, պարբերական խմբեր, հանրահաշվի ալգորիթմական հարցեր: 2013 թ.-ից ԵՊՀ Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչն է: Արժանացել է բազմաթիվ պարգևների և մրցանակների՝ ՀՀ նախագահի մրցանակ բնական գիտությունների բնագավառում (2010 թ.), 2013 և 2014թթ. ՀՀ ԳՊԿ «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթող, Մ.Լոմոնոսովի 275-ամյակին նվիրված

Մոսկվայի Պետական Համալսարանի երիտասարդ գիտնականների մրցույթի հաղթող (1986 թ.), ՀՀ վարչապետի շնորհակալագիր՝ կրության ու գիտության ոլորտում ներդրած ավանդի համար (2014 թ.) և այլն: Մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների: 31 գիտական հոդվածների և 4 գրքերի հեղինակ է:

Սուսաննա Հովհաննիսյան - 1979թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1986թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2010 թ.՝ բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան. դոկտորական ատենախոսություն «Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը (Թումանյանի գիտական կենսագրությունը) (1900 – 1912 թթ.)»: 2006 թ.-ին շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 1990-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում ավագ, ապա առաջատար գիտաշխատող: Դասավանդել է ԵՊՀ-ում, ՀՊՃՀ-ում, Հյուսիսային համալսարանում: Մասնակցել է միջազգային գիտաժողովներին ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս: Ավելի քան 100 գիտական հոդվածների և 4 մենագրությունների հեղինակ է:

Սիմա Բոսնոյան - Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «Հանրային կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի է (մասնագիտացումը՝ «Կրթության կառավարում»): Բակալավրական կրթությունը ստացել է ԵՊԼՀ-ի Լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետի «Լեզվաբանություն» մասնագիտությամբ՝մասնագիտացումը- քաղաքագիտություն: Անցել է մի շարք վերապատրաստումներ, ունի թարգմանչական աշխատանքների փորձ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՑՑԻ ՕՐԱԿԱՐԳ

01–04.06.2015 թ.

	1.06.2015 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	14:00	15:00	60 րոպե
6	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	15:15	16:15	60 րոպե
7	Հանդիպում դասախոսների հետ	16:30	17:30	60 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:45	18:45	60 րոպե
	2.06.2015 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ակադեմիական խորհրդատուների խմբի հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ	10:45	12:00	75 րոպե
3	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ(ոչ միայն մանկավարժական հաստատություններից)	12:15	13:15	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	14:30	16:15	105 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	16:30	17:30	60 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:45	18:45	60 րոպե
	3.06.2015թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ՈՒԽ անդամների հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում բակալավրիատի ուսանողների հետ	10:45	12:00	75 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	12:15	13:45	90 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:00	14:45	45 րոպե
5	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների հետ	15:00	16:00	60 րոպե
6	Հանդիպում հեռակա ուսուցման ուսանողների հետ	16:15	17:15	60 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե
	4.06.2015 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում որակի ապահովման կենտրոնի հետ	9:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	10:45	12:00	75 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:15	13:15	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
5	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	14:30	15:00	30 րոպե
6	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:15	16:00	45 րոպե
7	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	16:15	17:00	45 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:15	18:00	45 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1.	ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն	1-10
2.	ՎՊՀ կանոնադրություն	1.2
3.	ՎՊՄԻ 2010-2015 թթ. ռազմավարական ծրագիր	1-10
4.	ՎՊՀ 2014-2018թթ. Զարգացման հայեցակարգը	1-10
5.	Հարցաթերթերի ձևաթղթեր և օրինակներ	1-10
6.	Առաքելության փոփոխմանը վերաբերվող հարցումների և վերլուծությունների հիմքեր / համալսարանական կրթության անցնելու հիմքեր	1,2
7.	Գիտխորհրդի արձանագրություններ /2010-2014 թթ./	2,3,5,6
8.	Ռեկտորատի նիստի արձանագրություն 14.05.2014	2
9.	Շահակիցներից ստացված արձագանքները ՌԾ-ի իրականացման վերաբերյալ (քննարկումների արձանագրություններ)	2,10
10.	Կարճաժամկետ ծրագրեր /ամբիոնների, ստորաբաժանումների/	2,3,5
11.	Ստորաբաժանումների, ամբիոնների հաշվետվությունները	2
12.	ՄԿԾ-ի աուդիտի կամ մոնիթորինգի նյութեր	2, 3
13.	Մասնագիտությունների կրթական ծրագրերի արդյունավետության վերլուծության հիմքեր	3,10
14.	Շրջանավարտների հետ հետադարձ կապի հիմքեր	10
15.	Ամբիոնների նիստերի արձանագրություններ 2013-2014 թթ.	4,
16.	Ինստիտուտի ինտեգրում համաշխարհային կրթական տարածքում (Ռեկտ.Հաշվ.)	
17.	«Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա» և «Իրավագիտություն» մասնագիտությունների կրթական ծրագրեր և ուսումնամեթոդական փաթեթներ	3
18.	Համալսարանում մշակված դասընթացների դասախոսական տեքստերը	3
19.	Գիտխորհրդի արձանագրությունները թիվ 10/2014-2015	2
20.	ԳՄԼ-ն և կոմպետենցիաների անձնագիրը	3
21.	Բենչմարքինգի նյութեր	3,10
22.	N16532 պիլոտային ծրագիր	3
23.	Կարիերայի և հեռավար կրթության կենտրոնի կողմից արված աշխատաշուկայի տվյալների վերլուծությունը	4,10
24.	Առկայով և հեռակայով ընդունված ուսանողների շարժընթացը 2010-2014 թթ.	4
25.	Իրավաբանական խորհրդատվական կենտրոնի նյութերը	4
26.	Սոցիոլոգիական հարցման հիմքերը և վերլուծությունները	10
27.	Ինքնուրույն-խմբային պարապմունքների փաստաթղթավորված հիմքերը	3,4
28.	Կարիերայի կենտրոնի փաստաթղթերը	3,4
29.	Գիտահետազոտական համալիր լաբորատորիայի փաստաթղթերը	6
30.	Քննությունները վերահսկող հանձնաժողովի արձանագրություններ	3,4,10
31.	«Լոռու մարզի աշխատաշուկայի պահանջարկի վերլուծություն» հետազոտության մեթոդաբանությունը:	1,2
32.	Դպրոցներ այցեր կատարած դասախոսների և ուսանողների անվանացանկ	8
33.	«Դասախոսը ուսանողների աչքերով» արդյունավետության վերաբերյալ	10

	ուսանողական հարցման» կանոնակարգը և հարցման արդյունքները:	
34.	Ուսումնաօժանդակ կազմի հաստիքացուցակը	4
35.	Պաշտոնի անձնագրեր	2
36.	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգ, 05.05. 2014թ., հրաման 671Լ/Կ):	5
37.	Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույց	5
38.	Մագիստրոսական թեզեր, ավարտական և կուրսային աշխատանքներ	3
39.	ՎՊՀ-ի աշխատակիցների հոդվածների ցանկը՝ տպագրված միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) և ՀՀ գրախոսվող ամսագրերում:	6
40.	Լաբորատորիաների, գրադարանի, բուժկետի գրանցամատյանները	7
41.	Ամբիոնների պլանավորման և հաշվետվության նյութերը	2
42.	Ուսումնամեթոդական վարչության հաշվետվությունները և դրանց վերլուծությունները	2
43.	ԶԼՄ-ներում հրապարակված նյութերը	8
44.	Կոռուպցիոն երևույթների պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարողականը	
45.	Լեզուների կենտրոնի և Լրացուցիչ ուսուցման կենտրոնի ծրագրերը	3,9
46.	Հիմքեր, որոնք վկայում են մշտադիտարկման մասին ????	
47.	ֆոկուս-խմբերի արձանագրությունների, հարցաթերթիկների վերլուծություններ:	10
48.	Հաշվետվություն Ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության կրթական ծրագրի աուդիտի /2014/ արդյունքների ներկայացում	
49.	ՄԿԾ ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգ. 2014	3
50.	Ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության կրթական ծրագիր /օրինակելի/, 2013	3
51.	Աուդիտի դիտողություններն ու առաջարկները « Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի վերաբերյալ	3
52.	Ուսանողների տվյալների էլեկտրոնային բազա / ռեգիստրար/	2, 4,
53.	Առարկայի ուսումնամեթոդական փաթեթներ /ԷՀՄ ճարտարեպետություն և ասեմբլեր լեզու-1, Ծրագրավորման լեզուներ, Ալգորիթմների տեսություն, և այլն/	3
54.	ՎՊՀ Բյուջետային և արտաբյուջետային միջոցների մուտքերը և ծախսերը 2014 և 2015թ.	6
55.	Մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողի պորտֆոլիո	4
56.	ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ	6
57.	Կրթության որակի ապահովման և գնահատման ներքուհական համակարգ /ներքուհական մոդել/ գրքույկ	10
58.	Հայոց լեզվի ամբիոնի ուսումնական աշխատանքի ծավալը 2014-2015 ուստարի /բակալավրիատի ,մագիստրոսի կրթական ծրագիր, առկա և հեռակա ուսուցում	3,4
59.	Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան /ՎՊՄԻ շրջանավարտների մասին տեղեկանք/	4
60.	Ցուցակ ՎՊՀ-ի պատմության բաժինն ավարտած ՀՀ Լոռու մարզի ուսումնական	4

	հաստատությունների աշխատակիցների	
61.	Ցուցակ ՎՊՀ-ի պատմության բաժինն ավարտած ՀՀ Լոռու մարզի ուսումնական հաստատությունների վարչական աշխատակիցների	4
62.	Տեղեկանք Հայաստանի ազգային արխիվի Լոռու մարզային մասնաճյուղում աշխատող ՎՊՀ շրջանավարտների մասին	4
63.	Պատմության ամբիոնի զարգացման ռազմավարություն 2012-2017 թթ.	2,5
64.	Պատմության ամբիոն, Գրաֆիկ ընթացիկ քննություններից անբավարար ստացող ուսանողների հետ տարվող խորհրդատվական աշխատանքների	3,5
65.	«Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկների «Առաջարկություններ» բաժնի նյութեր	5,10
66.	«Կանոնակարգ ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման»	4
67.	«Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի կազամակերպման և արդյունքների գնահատման մեթոդական ուղեցույց», հավելված	3
68.	«Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ձևերը»	3
69.	«Կանոնակարգ կուրսային աշխատանքի կատարման»	3
70.	«Մեթոդական ուղեցույց ռեֆերատների պատրաստման, ձևակերպման, ներկայացման և գնահատման»	3
71.	«Կանոնակարգ ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների (կոմպետենցիաների) ստուգման-գնահատման միջոցների լրակազմի (ֆոնդի) ձևավորման», «Գնահատման միջոցների լրակազմ»	3
72.	«Կանոնակարգ պրոֆեսորադասախոսական անձնակազմի զարգացման, ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման»	5

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ուսումնամեթոդական վարչություն
2. Դեկանատներ – Իրավագիտության, Մաթեմատիկայի, Հայոց լեզվի և գրականության
3. Ամբիոններ- Հայոց լեզվի, Գրականության, Օտար լեզուների, Մաթեմատիկայի, Ֆիզիկայի, Կենսաբանության, Մանկավարժության, Պատմության
4. Լաբորատորիաներ- Գիտահետազոտական համալիր, Կենսաբանության, Քիմիայի
5. Կաբինետներ- Լինգաֆոնային, Ֆիզիկայի, Ինֆորմատիկայի, Մաթ.մոդելավորման,
6. Լեզվի կենտրոն
7. Որակի ապահովման կենտրոն
8. Համագործակցության և կապերի բաժին
9. Լրացուցիչ ուսուցման կենտրոն
10. Իրավաբանական խորհրդատվական կենտրոն
11. Հոգեբանության կենտրոն
12. Ս.Մերգելյանի անվան համակարգչային կենտրոն
13. Ուսանողական խորհուրդ
14. Կարիերայի և հեռավար կրթության կենտրոն
15. Գրադարան
16. Բուժկետ
17. Հրաձգարան

Փորձագիտական խումբի անդամները մասնակցել են .

1. «Լրագրություն» մասնագիտության ուսանողների ինքնուրույն աշխատանքների ցուցադրմանը,
2. մագիստրոսական թեզերի պաշտպանությանը,
3. «Կենսաբանություն» մասնագիտության ավարտական քննությանը

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն
ԱՈՒՓ - Առարկայի ուսումնամեթոդական փաթեթ
ԲԿԵՏ – Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ԲՈՀ – Բարձրագույն որակավորող հանձնաժողով
ԲՈՒՀ -Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԽ – Գիտական խորհուրդ
ԳՄԼ- Գնահատման մեթոդների լրակազմ
ԵՊԼՀ - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ԶԼՄ - Զանգվածային լրատվամիջոց
ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
ՀՊՃՀ- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈԳ - Միջին որակական գնահատական
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - Որակի ապահովում
ՈԱԱԿ - Որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԿ - Որակի ապահովման կենտրոն
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՊԴ – Պրոֆեսորադասախոսական
ՊԴԿ – Պրոֆեսորադասախոսական կազմ
ՊԻԳԲ – Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
ՎՊՀ - Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան
ՎՊՄԻ – Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ
ՈԻԳԸ - Ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ – Ուսանողական խորհուրդ
PR- Public relation – հասարակության հետ կապեր
SWOT- Strengths, Weaknesses, Opportunities, Threats - ուժեղ, թույլ կողմեր, հնարավորություններ, ռիսկեր